

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՑՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության շրջանակներում քաղաքացիների զինվորական ծառայությանը նախապատրաստության, զինվորական ծառայության և պահեստազորային պատրաստության կազմակերպման և իրականացման, ինչպես նաև զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողներին հավասարեցված անձանց իրավական և սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Զինվորական ծառայության մասին օրենսդրությունը

1. Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից և այլ նորմատիվ իրավական ակտերից:

2. Սույն օրենքի դրույթներն ազգային անվտանգության մարմինների զինծառայողների վրա տարածվում են շարքային ու կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չկարգավորված մասերով:

ԲԱԺԻՆ 2

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 2

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 3. Զինվորական ծառայությունը

1. Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: Օտարերկրյա պետությունների զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների քաղաքացիների ծառայությունը կամ ուսումնառությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում կամ ռազմաուսումնական հաստատություններում կարգավորվում են համապատասխան պայմանագրերով:

2. Զինվորական ծառայությունը ներառում է՝

1) զորակոչի՝ պարտադիր կամ զորահավաքային կամ պայմանագրի կնքման կամ վարժական հավաքի կանչվելու միջոցով զինվորական ծառայությանը ներգրավումը:

2) զինվորական պաշտոնի նշանակումը և զինվորական կոչման շնորհումը:

3) զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակից բխող պարտականությունների իրականացումը:

4) զինվորական ծառայությունից արձակումը:

3. Առաջին անգամ զինվորական ծառայություն անցնող քաղաքացին Հայաստանի Հանրապետության պետական դրոշի և զորամասի մարտական դրոշի առջև, տալիս է հավատարմության երդում: Երդման տեքստը սահմանվում է օրենքով: Ուսումնառության ընթացքում ռազմական պատրաստություն անցնող անձինք զինվորական երդում են տալիս ուսումնական ծրագրի շրջանակում կազմակերպվող հավաքի ժամանակ:

Հոդված 4. Զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքները և ձևերը

1. Զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքներն են՝
 - 1) միանձնյա և կենտրոնացված դեկավարումը.
 - 2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների գերակայությունը.
 - 3) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը զինծառայողների անձնացող նվիրվածությունը.
 - 4) զինծառայողների արհեստավարժությունը.
 - 5) զինծառայողների իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը.
 - 6) զինծառայողների պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքն ու խտրականության արգելումը.
 - 7) զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավական ու սոցիալական պաշտպանվածությունը:
2. Զինվորական ծառայության ներգրավումն իրականացվում է՝

1) գորակոչի միջոցով՝
ա. սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիների համար,
բ. ռազմաուսումնական հաստատություններ ընդունված՝ 18 տարին չլրացած քաղաքացիների համար՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով.

2) պայմանագրով՝
ա. պահեստազորում հաշվառված և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած կամ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար,
բ. պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած իգական սեռի քաղաքացիների համար.
3) գորահավաքային գորակոչի միջոցով՝ պահեստազորում հաշվառված քաղաքացիների համար.
4) պահեստազորի գորահավաքային նախապատրաստության շրջանակներում անցկացվող վարժական հավաքներին կանչվելու միջոցով՝ պահեստազորում հաշվառված քաղաքացիների համար:
3. Ռազմաուսումնական հաստատություն ընդունված՝ 18 տարին չլրացած քաղաքացու գորակոչը կազմակերպվում է փաստաթղթային ձևակերպման միջոցով՝ համապատասխան զինվորական կոմիսարիատում նշված քաղաքացու զինվորական հաշվառման փաստաթղթերում ռազմաուսումնական հաստատություն ընդունվելու և, սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, որպես կուրսանտ գրանցվելու վերաբերյալ վերառններ կատարելու միջոցով:

Հոդված 5. Զինվորական ծառայության տեսակները և ժամկետները

1. Զինվորական ծառայության տեսակներն են՝
 - 1) ժամկետային.
 - 2) պահեստազորային.
 - 3) գորահավաքային:
2. Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:
3. Պարտադիր զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության իրականացման հիմնական ձևն է: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում գորակոչի միջոցով կազմակերպվող ծառայությունը: Օրենքի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող ընդունվել հանրային ծառայության:
4. Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝
 - 1) շարքային կազմի համար՝ 24 ամիս, իսկ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց համար՝ 3 տարի.
 - 2) պահեստազորի սպայական կազմի համար՝ 24 ամիս.
 - 3) պարտադիր զինվորական ծառայություն չանցած և ռազմաուսումնական հաստատություններ ընդունված անձանց համար՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության ժամկետով, որը ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություններում սովորողների մասով ներառում է նաև ինտերնատուրայում ուսումնառության ժամկետը:5. Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը կարող են մասնակցել 18 տարին չլրացած քաղաքացիները, ինչպես նաև մինչև 23 տարեկան՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա քաղաքացիները, զինծառայողները, պահեստազորում հաշվառված քաղաքացիները, իգական սեռի քաղաքացիները: Պարտադիր զինվորական ծառայություն չանցած և ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիներն ուսումնառության ընթացքում համարվում են ժամկետային պարտադիր զինծառայողներ, և նրանց վրա տարածվում են ժամկետային պարտադիր զինծառայողների համար օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:
6. Ուսումնառության ընթացքում իր դիմումի համաձայն կամ առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու հիման վրա ռազմաուսումնական հաստատությունից ազատվելու կամ անբավարար առաջադիմության կամ կարգապահական տույժի պատճառով հեռացված 18 տարին լրացած քաղաքացին ուղարկվում է շարունակելու շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունը՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով: Պարտադիր զինվորական ծառայության ժամկետում տվյալ դեպքում հաշվարկվում է միայն առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունից ազատված քաղաքացու ուսման, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություն ընդունված զինծառայողի նախկինում ծառայած ժամանակաշրջանը: Մինչև 18 տարեկանը լրանալը ռազմաուսումնական հաստատությունից ազատված կամ հեռացված քաղաքացիները հաշվառվում են իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի գորակոչային բաժնում և 18 տարեկանը լրանալուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով:
7. Պարտադիր զինվորական ծառայությունը կարող է փոխարինվել այլընտրանքային ծառայությամբ՝ օրենքով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներով: Այլընտրանքային ծառայության գորակոչն իրականացվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն:

8. Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրի հիման վրա կազմակերպվող ծառայությունը: Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագրերը կնքվում են 3-12 ամիս կամ երեք կամ հինգ տարի ժամկետով, իսկ ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների հետ՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության և հետուսումնական 10 տարի ժամկետով, որը պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասով ներառում է նաև ուսումնառության ժամանակահատվածը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն:

9. Պահեստագրային զինվորական ծառայություն է համարվում պահեստագրի պատրաստության շրջանակներում սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված վարժական հավաքների ժամանակ իրականացվող ծառայությունը:

10. Ջորահավաքային զինվորական ծառայություն է համարվում օրենքով սահմանված դեպքերում հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի հիման վրա կազմակերպվող ծառայությունը: Ջորահավաքային զինվորական ծառայությունն իրականացվում է մինչև զորահավաք հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքի՝ օրենքով սահմանված կարգով դադարեցումը:

Հոդված 6. Զինվորական ծառայության սկիզբը և ավարտը

1. Զինվորական ծառայության սկիզբ է համարվում՝
 - 1) պարտադիր զինվորական ծառայության գորակոչված կամ զորահավաքային զորակոչի կամ պահեստագրային զինվորական ծառայության կանչված քաղաքացիների համար՝ ծառայության վայր մեկնելու նպատակով զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը:
 - 2) պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը:
 - 3) ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ ռազմաուսումնական հաստատությունում որպես կուրսանտ գրանցվելու օրը:
2. Զինվորական ծառայությունն ավարտված է համարվում զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու կապակցությամբ գորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի և բավարարման (ապահովման) ցուցակներից հանելու օրը:

Հոդված 7. Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգը

1. Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ սույն օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը: Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով: Օրենքով կարող է սահմանվել նաև զինվորական ծառայության ժամկետի արտոնյալ հաշվարկ:
2. Զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում զինծառայողի՝
 - 1) ազատագրված կամ կալանքի ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը:
 - 2) ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը:
 - 3) գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղձման կամ դիտավորությամբ իր առողջական վիճակն այլ եղանակով վատթարացրած զինծառայողի բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածները՝ անկախ պատճառներից, ինչպես նաև զինծառայողի պահանջով իր առողջական վիճակի կրկնակի հետազոտման մեջ գտնվելու ժամանակահատվածը, եթե հետազոտման արդյունքներով զինծառայողի բուժման անհրաժեշտությունը բացակայում է:
 - 4) ռազմաուսումնական հաստատություններից կարգապահական տույժի կարգով կամ անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու համար հեռացված կուրսանտների ուսման կամ սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում պայմանագրային զինվորական ծառայության ժամանակահատվածը՝ սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում:
 - 5) սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձի կողմից պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պայմանագրից հրաժարվելու դեպքում սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն ամսական արձակուրդում գտնվելու օրերը՝ սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում:
 - 6) սույն օրենքի խախտմամբ պայմանագրային զինվորական ծառայություն անցած լինելու ժամանակահատվածը:
3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում պարտադիր զինծառայության սահմանված ժամկետը լրացվում է բաց թողնված օրացուցային օրերի քանակով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:
4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում նշված ժամկետները հաշվարկվում են զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում, եթե զինծառայողն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ:

Հոդված 8. Զինվորական ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Զինծառայողն իրավունք չունի՝
 - 1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ընդ որում, պետական ծառայությունը զերակայում է սույն կետում նշված աշխատանքի նկատմամբ:
 - 2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնելու ընտրովի կամ այլ պաշտոններ, բացառությամբ սույն օրենքով սահմանված զինվորական պաշտոնների:
 - 3) ստեղծելու կուսակցություններ կամ կրոնական միավորումներ, անդամակցելու որևէ կուսակցության կամ արհեստակցական միության, իսկ կրոնական միավորման անդամ հանդիսանալու դեպքում զինվորական ծառայության ընթացքում և ծառայակիցների շրջանում իրականացնելու քարոզական գործունեություն:
 - 4) ոչ ծառայողական նպատակների համար օգտագործելու պետական սեփականություն հանդիսացող նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական ու տեղեկատվական միջոցներ:
 - 5) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցել դրանց:

6) պաշտոնեական դիրքն օգտագործելու ի շահ կուսակցությունների, կրոնական, հասարակական կազմակերպությունների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության.

7) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

8) վարձատրություն ստանալու ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.

9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալու նվերներ, զումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Ձինծառայողների իրավունքները և պարտականությունները, այդ թվում՝ ընտրական իրավունքն ու հանրաքվեների մասնակցության կարգը, կարգապահական իրավունքը և կարգապահական պատասխանատվությունը սահմանվում են օրենքով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները չպահպանելը զինծառայողի նկատմամբ հանգեցնում է կարգապահական, ինչպես նաև օրենքով սահմանված այլ պատասխանատվության կիրառման:

ԳԼՈՒԽ 3

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Հոդված 9. Զինվորական ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Զինվորական ծառայության պաշտոնները դասակարգվում են հրամանատարական և ոչ հրամանատարական կազմերի:
2. Հրամանատարական կազմի պաշտոնները բաժանվում են հետևյալ խմբերի.
 - 1) բարձրագույն հրամանատարական.
 - 2) ավագ հրամանատարական.
 - 3) միջին հրամանատարական.
 - 4) կրտսեր հրամանատարական:
3. Ոչ հրամանատարական կազմի պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
 - 1) բարձրագույն սպայական.
 - 2) ավագ սպայական.
 - 3) կրտսեր սպայական.
 - 4) ավագ ենթասպայական.
 - 5) կրտսեր ենթասպայական.
 - 6) շարքային:
4. Զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ մյուս հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:
5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարարական ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
6. Զինվորական պաշտոնները միմյանց նկատմամբ կարող են համարվել հավասար կամ բարձր կամ ցածր՝ ըստ պաշտոնների խմբերում իրենց զբաղեցրած դիրքի:

Հոդված 10. Զինծառայողների կազմերը, զինվորական կոչումները և դրանց կրման ժամկետները

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սահմանվում են զինծառայողների հետևյալ կազմերը և զինվորական կոչումները.
 - 1) շարքային կազմ՝ «շարքային» և «եֆրեյտոր» զինվորական կոչումներով.
 - 2) ենթասպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝
 - ա. կրտսեր ենթասպայական կազմից՝ «կրտսեր սերժանտ», «սերժանտ», «ավագ սերժանտ», «ավագ» զինվորական կոչումներով,
 - բ. ավագ ենթասպայական կազմից՝ «ենթասպա», «ավագ ենթասպա» զինվորական կոչումներով.
 - 3) սպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝
 - ա. կրտսեր սպայական կազմից՝ «լեյտենանտ», «ավագ լեյտենանտ», «կապիտան» զինվորական կոչումներով,
 - բ. ավագ սպայական կազմից՝ «մայոր», «փոխգնդապետ» «գնդապետ» զինվորական կոչումներով,
 - գ. բարձրագույն սպայական կազմից՝ «գեներալ-մայոր», «գեներալ-լեյտենանտ», «գեներալ-գնդապետ», «բանակի գեներալ» զինվորական կոչումներով:
 2. Զինվորական կոչումների կրման ժամկետներն են՝
 - 1) կրտսեր սերժանտ՝ 1 տարի.
 - 2) սերժանտ, ավագ սերժանտ, ավագ՝ 2 տարի.
 - 3) ենթասպա՝ 3 տարի.
 - 4) լեյտենանտ՝ 2 տարի.
 - 5) ավագ լեյտենանտ՝ 2 տարի.
 - 6) կապիտան՝ 3 տարի.
 - 7) մայոր՝ 3 տարի.
 - 8) փոխգնդապետ՝ 4 տարի:
 3. «Շարքային», «եֆրեյտոր», «ավագ ենթասպա», «գնդապետ» և բարձր մյուս զինվորական կոչումների կրման համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

4. Չհնվորական կոչումները (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) լինում են առաջին և հերթական: Շարքային կազմի համար առաջին զինվորական կոչում է համարվում «շարքային» զինվորական կոչումը, ենթասպայական կազմի համար «կրտսեր սերժանտ» զինվորական կոչումը, սպայական կազմի համար՝ «լեյտենանտ» զինվորական կոչումը: Ենթասպայական և սպայական կազմերի (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) մյուս զինվորական կոչումները համապատասխան կազմերում համարվում են հերթական զինվորական կոչումներ:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված զինվորական կոչումների կրման ժամկետը հաշվարկվում է կոչում շնորհելու օրվանից: Այդ ժամկետում ներառվում են նաև՝

1) զինծառայողին ոչ իրավաչափ քրեական պատասխանատվության ենթարկելու, զինվորական կոչումից զրկելու կամ զինվորական կոչումն իջեցնելու կամ կարգապահական տույժ ստացած լինելու կամ հանցագործության դեպքի կամ արարքում հանցակազմի բացակայության հիմքով կարճված քրեական վարույթով ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման, ինչպես նաև անօրինական գորացրելու և հետագայում վերականգնելու հետևանքով ընդհատված ժամանակահատվածները:

2) պահեստագործում գտնվելու ժամանակաշրջանը, ընդ որում, պահեստագործում հաշվառված անձանց համար տվյալ զինվորական կոչումը կրելու ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներից մեկ տարով ավելի է:

6. Պահեստագործի զինվորական ծառայության ընդունված զինծառայողների՝ ունեցած զինվորական կոչումով ծառայության ժամկետում հաշվարկվում է պահեստագործում շնորհված զինվորական կոչումը կրելու ժամանակը:

Հոդված 11. «Լեյտենանտ» զինվորական կոչում շնորհելը

1. «Լեյտենանտ» զինվորական կոչում շնորհվում է՝

1) ռազմաուսումնական հաստատություն կամ սպայական դասընթաց ավարտած՝ սպայական կոչում չունեցող զինծառայողներին, ընդ որում՝ ռազմաբժշկական բնույթի ռազմաուսումնական հաստատություն ավարտած զինծառայողին «Լեյտենանտ» զինվորական կոչում շնորհվում է ինտերնատուրան ավարտելուց հետո:

2) բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած քաղաքացիներին՝ սույն օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո:

3) սպայական պաշտոնի նշանակված բարձրագույն կրթություն ունեցող զինծառայողներին:

4) պահեստագործում հաշվառված և բարձրագույն կրթություն ունեցող քաղաքացիներին՝ պահեստագործային պատրաստության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին մասնակցելուց հետո:

Հոդված 12. Ավագ ենթասպայական զինվորական կոչումներ շնորհելը

1. «Ենթասպա» զինվորական կոչում շնորհվում է՝

1) պայմանագրային զինվորական ծառայություն անցնող և «ավագ» զինվորական կոչում ունեցող այն զինծառայողներին, որոնց զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է ավագ ենթասպայական կազմի զինվորական կոչմանը, ու լրացել է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետը:

2) ավագ ենթասպայական կազմի համապատասխան մասնագիտական ուսումնական ծրագիր ավարտած շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին:

3) պայմանագրային զինվորական ծառայության ընդունված և ավագ ենթասպայական խմբի պաշտոնի նշանակված զինծառայողներին, որոնք ունեն կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում և բարձրագույն կրթություն:

2. «Ավագ ենթասպա» զինվորական կոչում շնորհվում է «Ենթասպա» զինվորական կոչումը կրելու ժամկետը լրացած այն զինծառայողներին, որոնց զբաղեցրած զինվորական պաշտոնի հաստիքային դասակարգմանը համապատասխանում է «ավագ ենթասպա» զինվորական կոչումը:

Հոդված 13. Կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչումներ շնորհելը

1. «Կրտսեր սերժանտ» զինվորական կոչում շնորհվում է պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող և համապատասխան ուսումնական հավաքներ անցած կամ սերժանտական դասընթաց ավարտած զինծառայողներին, ինչպես նաև խրախուսման կարգով՝ բարեխիղճ և ծառայության բարձր ցուցանիշներ ունեցող զինծառայողներին՝ համապատասխան խմբերի պաշտոնների նշանակվելու դեպքում:

2. «Սերժանտ» զինվորական կոչում շնորհվում է պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող և համապատասխան ուսումնական հավաքներ անցած կամ սերժանտական դասընթաց ավարտած զինծառայողներին, ինչպես նաև «կրտսեր սերժանտ» զինվորական կոչում ունեցող այն զինծառայողներին, որոնց զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է «սերժանտ» և դրանից բարձր զինվորական կոչմանը, ու լրացել է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետը:

3. «Ավագ սերժանտ» զինվորական կոչում շնորհվում է պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող և համապատասխան ուսումնական հավաքներ անցած կամ սերժանտական դասընթաց ավարտած զինծառայողներին, ինչպես նաև «սերժանտ» զինվորական կոչում ունեցող այն զինծառայողներին, որոնց զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է «ավագ սերժանտ» և դրանից բարձր զինվորական կոչմանը, ու լրացել է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետը:

4. «Ավագ» զինվորական կոչում շնորհվում է «ավագ սերժանտ» զինվորական կոչում ունեցող այն զինծառայողներին, որոնց զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է «ավագ» և դրանից բարձր զինվորական կոչմանը, ու լրացել է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետը:

Հողված 14. Շարքային կազմի զինվորական կոչումներ շնորհելը

1. «Շարքային» զինվորական կոչում շնորհվում է՝
 - 1) պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիներին՝ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներում գրանցելիս.
 - 2) զինվորական կոչում չունեցող և սույն օրենքով սահմանված կարգով պահեստագոր փոխանցվող քաղաքացիներին՝ պահեստագորում հաշվառելիս.
 - 3) ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիներին՝ որպես կուրսանտ գրանցելիս.
 - 4) սույն օրենքով սահմանված կարգով առաջին անգամ պայմանագրային զինվորական ծառայության ներգրավվող իգական սեռի քաղաքացիներին՝ զինվորական պաշտոնի նշանակելիս:
2. «Եֆրեյտոր» զինվորական կոչում շնորհվում է խրախուսման կարգով՝ «շարքային» զինվորական կոչում ունեցող զինծառայողներին:

Հողված 15. Հերթական զինվորական կոչում շնորհելը

1. Հերթական զինվորական կոչում շնորհվում է հաջորդական կարգով, եթե զինծառայողի զբաղեցրած զինվորական պաշտոնի խմբին համապատասխանում է շնորհվող զինվորական կոչմանը հավասար կամ բարձր զինվորական կոչում: Հերթական զինվորական կոչումը շնորհվում է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետն ավարտվելու դեպքում:
2. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունների ունկնդիր, աղյուսկտ (ասպիրանտ), օրդինատոր կամ դոկտորանտ սպայական կազմի զինծառայողներին հերթական զինվորական կոչում, մինչև «գնդապետ» զինվորական կոչումը ներառյալ, շնորհվում է նախկին կոչումով ծառայության ժամկետը լրանալու օրը, եթե հերթական զինվորական կոչումը համապատասխանում է մինչև ուսման ընդունվելը զբաղեցրած զինվորական պաշտոնով նախատեսված զինվորական կոչմանը:
3. Հերթական զինվորական կոչումը վաղաժամկետ շնորհվում է խրախուսման կարգով, բայց ոչ բարձր զբաղեցրած զինվորական պաշտոնի համար սահմանված զինվորական կոչումից:
4. Ձինվորական կոչումը կրելու ժամկետը լրացած զինծառայողներին զինվորական ծառայության ընթացքում խրախուսման կարգով կարող է շնորհվել զբաղեցրած պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աստիճան բարձր զինվորական կոչում՝ մինչև «փոխգնդապետ» զինվորական կոչումը ներառյալ:
5. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով պատժի դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զինվորական ծառայության մեջ սահմանափակման կամ կալանքի ձևով պատիժը կրելու կամ ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման կամ «հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում» կարգապահական տույժի կրման ժամանակահատվածները չեն հաշվարկվում զինվորական կոչումով ծառայության կրման ժամկետում: Սույն մասում նշված, ինչպես նաև զինծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցված կամ ծառայողական քննություն նշանակված կամ կարգապահական տույժ ստացած լինելու ժամանակահատվածներում զինծառայողին չի շնորհվում հերթական զինվորական կոչում:
6. Ձինված ուժերի և այլ զորքերի բժիշկ-մասնագետների զինվորական կոչումներին ավելացվում են «բժշկական ծառայության» բառերը: Սույն օրենքի համաձայն՝ պահեստագորում հաշվառված կամ պաշտոնաթող քաղաքացիների զինվորական կոչումներին համապատասխանաբար ավելացվում են «պահեստագորի» և «պաշտոնաթող» բառերը:
7. Ձինվորական կոչում շնորհելու կարգը, ներկայացման և զինվորական կոչում շնորհելու հրամանների ձևերը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:
8. Պահեստագորում հաշվառված քաղաքացիներին հերթական զինվորական կոչում շնորհվում է պահեստագրային պատրաստության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին մասնակցելուց հետո՝ միջոցառումը ղեկավարող պաշտոնատար անձի ներկայացմամբ:
9. Պահեստագորում հաշվառված քաղաքացիներին հերթական զինվորական կոչում կարող է շնորհվել երկու անգամ:
10. Պահեստագորից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավված զինծառայողներին հերթական կոչում շնորհվում է՝
 - 1) ենթասպայական կազմի կոչումներ՝ երեք ամիս հետո.
 - 2) ավագ լեյտենանտ և կապիտան՝ վեց ամիս հետո.
 - 3) մայոր, փոխգնդապետ և գնդապետ՝ մեկ տարի հետո:
11. Պետական լիազոր այլ մարմիններից տեղափոխված զինծառայողներին հերթական կոչում շնորհվում է՝
 - 1) ենթասպայական կազմի կոչումներ, ավագ լեյտենանտ և կապիտան՝ երեք ամիս հետո.
 - 2) մայոր, փոխգնդապետ և գնդապետ՝ վեց ամիս հետո:
12. Ձինծառայողի զինվորական կոչումը կարող է իջեցվել օրենքով սահմանված կարգով՝ համապատասխան կարգապահական տույժ ստալու միջոցով: Ձինծառայողը զինվորական կոչումից կարող է զրկվել դատական կարգով, ինչպես նաև սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև շարքային՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հողված 16. Ձինվորական կոչում շնորհող մարմինները

1. Ձինվորական կոչում շնորհում են՝
 - 1) Հայաստանի Հանրապետության նախագահը՝ բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչումները՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ.
 - 2) պետական լիազոր մարմնի ղեկավարը՝ ավագ սպայական և «լեյտենանտ» զինվորական կոչումները.
 - 3) պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք՝ սույն մասի 2-րդ կետում նշված մյուս սպայական, ենթասպայական, շարքային կազմի զինվորական կոչումները, ինչպես նաև վաղաժամկետ կամ զբաղեցրած զինվորական պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աստիճան բարձր զինվորական կոչումները՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգապահական իրավունքի սահմաններում:

ԲԱԺԻՆ 3

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼԸ

ԳԼՈՒԽ 4

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 17. Քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունը

1. Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության գորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: Սույն մասում նշված դեպքերում քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

2. Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, հիվանդությունների ցանկը, որոնց առկայության դեպքում որոշվում է քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը զինվորական ծառայության համար, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

- 1) պիտանի է զինվորական ծառայության համար.
- 2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.
- 4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
- 5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
- 6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 7) կարիք ունի բուժման.
- 8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի.
- 9) ենթակա է կանչվելու վարժական հավաքի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ զինվորական ծառայությանը պիտանիության աստիճանը տրվում է՝ հաշվի առնելով սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված զինվորական ծառայության յուրաքանչյուր տեսակը:

5. Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Հոդված 18. Նախագորակոչային պատրաստությունը

1. Քաղաքացիներին զինվորական ծառայությանը նախապատրաստելու նպատակով հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպվում և անցկացվում է նախագորակոչային պատրաստություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում քաղաքացիները կարող են անցնել զինվորական պատրաստություն՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պաշտպանական բնույթի հասարակական կազմակերպություններում կարող են կազմակերպվել և անցկացվել զինվորական մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրեր: Նշված կրթական ծրագրերին քաղաքացիները մասնակցում են զինվորական կոմիսարիատի ընտրությամբ և ուղեգրով:

ԳԼՈՒԽ 5

ՊԱՐՏԱԴՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ

Հոդված 19. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումը

1. Պարտադիր զինվորական ծառայությունը կազմակերպվում է զորակոչի միջոցով: Զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը (այսուհետ՝ պահեստազորի սպայական կազմ): Հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

2. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, որը նախկինում դատապարտվել է ազատազրկման՝ ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար և ազատազրկման ձևով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով:

3. Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կալանքի ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև զորակոչի կազմակերպման հետ կապված գործողությունները, զորակոչի կազմակերպման մարմինները, զորակոչի ժամկետը և սույն օրենքով նախատեսված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրման մասին:

5. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև զորակոչի կազմակերպման հետ կապված գործողությունները, պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ժամկետը, զորակոչի ենթակա անձանց թվաքանակը և այն զինվորական հաշվառական մասնագիտությունը, որն ունեցող պահեստազորի սպայական կազմի քաղաքացիները ենթակա են զորակոչի, ինչպես նաև նախատեսված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած սպաների զորացրման մասին:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության համապատասխան զորակոչերի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից տրվում է զորակոչի անցկացման և սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելու մասին հրաման:

Հոդված 20. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու քաղաքացիների պարտականությունը

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը, իսկ քաղաքացու օտարերկրյա պետությունում բնակվելու և տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված լինելու դեպքում՝ դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին ծանուցման մեջ նշելով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո սույն օրենքի համաձայն պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականություն ունեցող և զորակոչի ենթակա (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացիները պարտավոր են ծանուցման մեջ նշված ժամկետում ներկայանալ իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավել մոտ զինվորական կոմիսարիատ:

3. Սույն հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու պարտականության խախտումը քաղաքացիների համար հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Հոդված 21. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմքերը

- Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝
 - առողջական վիճակի պատճառով ձանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.
 - մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն:
- Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:
- Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝
 - առողջական վիճակի պատճառով ձանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար.
 - մինչև պահեստազորի սպայական կազմ որակավորվելն անցել է պարտադիր զինվորական ծառայություն:
- Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում:

5. Սույն հոդվածով չնախատեսված այլ հիմքով քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից անկախ այլ պետությունում ծառայելու հանգամանքից:

Հոդված 22. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը

1. Սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով:

2) ընտանեկան պայմաններից ելնելով:

2. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր ընտրված քաղաքացուն՝ պատգամավորական լիազորությունների ողջ ժամկետով:

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է նաև նպատակային ուսումնառության համար՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը:

2) Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 19 տարին լրանալու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացուն տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն տրված տարկետման ժամկետի ավարտից հետո շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչելիս քաղաքացու առողջական վիճակի փորձաքննությունն իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության ենթակա պահեստագործի սպաների փորձաքննության համար սահմանված կարգով, ինչպես նաև նշված քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

5. Պարտադիր, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք ունեցող կամ այդ հիմքով տարկետում ստացած, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի համաձայն տարկետում ստացած քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել տարկետման իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

Հոդված 23. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տալը

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

2. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պարտադիր զինվորական ծառայությունից:

3. Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է մեկ անգամ՝ երեք տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

4. Սույն հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստագործում հաշվառված քաղաքացին մինչև 27 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

5. Պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

6. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է հինգ անգամ՝ մեկ տարի ժամանակով: Հինգերորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից:

7. Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երկու անգամ՝ երեք տարի ժամանակով: Երկրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից:

8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին մինչև 35 տարին լրանալը ենթակա է բժշկական վերափորձաքննության՝ հինգ տարին մեկ անգամ: Բժշկական վերափորձաքննության արդյունքներով պիտանի զինվորական ծառայության համար կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար ճանաչված պահեստազորի սպայական կազմում հաշվառված քաղաքացին ենթակա է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

Հոդված 24. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տալը

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

2. Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա և որդեգրվել է խնամատար հաստատությունից, և առկա են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետերով նախատեսված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից: Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իմաստով՝ ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.

2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) մինչև քաղաքացու 18 տարին լրանալը առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին.

4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, և ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ սույն օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, իսկ 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդան օրը: Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

6. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետով կամ 2-րդ մասով նախատեսված ընտանեկան պայմաններ.

2) առանց մոր մեծացող հաշմանդամություն ունեցող երեխա:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը: Սույն հոդվածի 6-րդ

մասով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա 35 տարին լրանալու օրը: Եթե 35 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 35 տարին լրանալու հիման վրա ազատվում է պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից:

8. Սույն հոդվածի համաձայն՝ քաղաքացին համարվում է ստացած տարկետման իրավունքը կորցրած, եթե նրա մոտ վերացել են տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները: Քաղաքացին պարտավոր է ստացած տարկետումից հետո յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնել տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հաստատող փաստաթղթերը:

Հոդված 25. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումն ապահովող մարմինները

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվում են հանրապետական և, ըստ մարզերի (Երևան քաղաքի)՝ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովներ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ներկայացմամբ:

2. Շարքային կամ պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչների պատշաճ իրականացման համար պատասխանատու է համապատասխան զինվորական կոմիսարիատը, որի շրջանակներում զինվորական կոմիսարը՝

1) կազմակերպում է շարքային և պահեստազորի սպայական կազմերի զորակոչների ենթակա քաղաքացիների առողջական վիճակի նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման գործընթացը.

2) որոշում է կայացնում սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմք չունեցող շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու մասին.

3) նախապատրաստում և նախնական եզրակացությամբ՝

ա. մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով է ներկայացնում սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված հանգամանքների, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքացու՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ փաստաթղթերը,

բ. իրավասու բժշկական հանձնաժողով է ներկայացնում առողջական խնդիրներ ունեցող շարքային և պահեստազորի սպայական կազմերի զորակոչների ենթակա քաղաքացիների նախնական և այլ հետազոտությունները, նրանց առողջական վիճակի վերաբերյալ առկա այլ փաստաթղթեր,

գ. ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության մանդատային հանձնաժողով է ներկայացնում շարքային կազմի քաղաքացիների կողմից տրված ռազմաուսումնական հաստատությունների ընդունելությանը կամ սպայական դասընթացներին մասնակցելու դիմումները,

դ. պահեստազորի սպաների զորակոչային մանդատային հանձնաժողով է ներկայացնում սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 24-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերը:

3. Մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովը՝

1) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև սույն օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գիտական աստիճան ունենալու և մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ զբաղվելու հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

բ. սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 24-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով շարքային կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին.

2) առաջարկություն է ներկայացնում հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ կամ մերժում է նշված հիմքով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ քաղաքացու դիմումը:

4. Հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝

1) համակարգում և վերահսկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.

2) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով և 23-րդ հոդվածի 2-րդ ու 3-րդ մասերով նախատեսված դեպքերում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

բ. սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով և նույն հոդվածով նախատեսված ժամկետներում քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին.

3) եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու նպատակահարմարության վերաբերյալ.

4) քննարկում է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ ներկայացված բողոքները:

5. Հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության կամ կայացրած որոշումների (տրված եզրակացությունների) վերաբերյալ բողոքներ ներկայացնելը՝ մինչև այդ որոշումների (տրված եզրակացությունների) վերանայումը, չի կասեցնում դրանց կատարումը:

6. Հանրապետական կամ մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովների, ինչպես նաև իրավասու բժշկական հանձնաժողովների և զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) որոշումները (տրված եզրակացությունները) դրանց կայացման օրվանից եռօրյա ժամկետում տրվում են քաղաքացուն կամ նրա օրինական

ներկայացուցին: Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները դրանց կայացման օրվանից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

7. Պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված գորակոչի կազմակերպման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվում է պահեստագործի սպաների գորակոչի մանդատային հանձնաժողով, որը.

1) համակարգում և վերահսկում է պահեստագործի սպայական կազմի գորակոչի ապահովման ուղղությամբ զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեությունը.

2) որոշում է կայացնում՝

ա. սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման հիմք չունեցող պահեստագործի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու մասին,

բ. սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով, 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում պահեստագործի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու մասին,

գ. սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ, 23-րդ հոդվածի 5-րդ և 24-րդ հոդվածի 6-րդ մասերով նախատեսված հիմքերով ու նույն հոդվածներով նախատեսված ժամկետներում պահեստագործի սպայական կազմի քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տալու մասին,

դ. սույն օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա սահմանված գորակոչի ենթակա անձանց թվաքանակը սույն կետի «ա» ենթակետի համաձայն լրանալու դեպքում գորակոչին կանչված մնացած քաղաքացիների գորակոչը հետաձգելու մասին.

3) քննարկում է զինվորական կոմիսարիատների (զինվորական կոմիսարների) գործունեության վերաբերյալ տրված բողոքները:

8. Պահեստագործի սպաների գորակոչի մանդատային հանձնաժողովի որոշումը դրա կայացման օրվանից եռօրյա ժամկետում տրվում է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին: Պահեստագործի սպաների գորակոչի մանդատային հանձնաժողովի որոշումները դրանց կայացման օրվանից երկամսյա ժամկետում կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

9. Սույն հոդվածում նշված գորակոչային և մանդատային հանձնաժողովներն իրենց գործունեությունն իրականացնում են նիստերի ձևով: Նիստն իրավագործ է հանձնաժողովի անդամների կեսից ավելիի ներկայության դեպքում: Հանձնաժողովի որոշումները (եզրակացությունները) ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

10. Շարքային և պահեստագործի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված գորակոչների բժշկական ապահովումն իրականացնում են սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված իրավասու բժշկական հանձնաժողովները, որոնք

1) իրականացնում են շարքային կամ պահեստագործի սպայական կազմերի գորակոչների ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտությունները և փորձաքննությունները.

2) փորձաքննական եզրակացություն են տալիս քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ.

3) քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տրված փորձաքննական եզրակացությունները ներկայացնում են հանրապետական գորակոչային կամ պահեստագործի սպաների գորակոչի մանդատային հանձնաժողովներ:

ԳԼՈՒԽ 6

ՊՐՈՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈ

Հոդված 26.

Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու կարգը

1. Հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիների (այսուհետ՝ շարքային կազմի պարտադիր զինծառայողներ) ծառայության վայրեր նշանակումը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների, իրականացվում է կենտրոնացված ձևով և վիճակահանությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-4-րդ մասերի պահանջները:

2. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելիս հաշվի են առնվում ստացած կրթությունը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, սույն օրենքով սահմանված այլ պայմաններ: Ծառայության վայրեր նշանակված շարքային կազմի պարտադիր զինծառայողները մինչև զինվորական երդում տալը համարվում են նորակոչիկներ և անցնում են զինվորական պատրաստության ծրագիր: Շարքային կազմի պարտադիր զինծառայողները կարող են ուղարկվել ուսումնական գործասեր՝ ռազմահաշվառական մասնագիտություն ստանալու համար, կամ իրենց դիմումի համաձայն մասնակցել սպայական կամ սերժանտական դասընթացների: Սույն մասում նշված զինվորական պատրաստության ծրագրի կամ դասընթացների անցկացման կարգերն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը: Նորակոչիկները չեն կարող ընդգրկվել մարտական հերթապահության մեջ կամ ներգրավվել ռազմական գործողություններին:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ չի կարող ընդգրկվել այն զինծառայողը (բացառությամբ, եթե նա ցանկություն է հայտնել ընդգրկվելու մարտական հերթապահության մեջ, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասում նշված զինծառայողների):

1) որը հանդիսանում է 63 տարին լրացած կամ երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (եթե սահմանված չէ ինքնասպասարկման ապահովման ունակության երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակում) ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը.

2) որն ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում և այլ գործերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում

ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր)։

3) որն ամուսնացած է և ունի մեկ երեխա։

4) որի ծնողները մահացած են։

5) որի մեկ ծնողը մահացած է և այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են և ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ձանաչվել են անգործունակ։

4. Հայտարարված զորակոչի ընթացքում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում մինչև զորամասում։ Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը։

5. Շարքային կազմի այն պարտադիր զինծառայողները, որոնք ցանկություն են հայտնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում անցնել զինվորական ծառայություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում են պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով։

6. Հայտարարված սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի շրջանակներում, սույն օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների (այսուհետ՝ սպայական կազմի պարտադիր զինծառայողներ) ծառայության վայրեր նշանակումն իրականացվում է վիճակահանությամբ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով։ Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին ծառայության վայրեր նշանակելու վիճակահանությունն անցկացվում է՝ հաշվի առնելով սպայի մասնագիտացումը, զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը, սույն օրենքով սահմանված այլ պայմաններ։ Ասպիրանտուրա (դոկտորանտուրա) ավարտած կամ գիտական աստիճան ունեցող սպայական կազմի պարտադիր զինծառայողները ծառայության վայր նշանակվում են ըստ գիտական մասնագիտացման։ Վիճակահանությամբ ծառայության վայրեր նշանակված սպայական կազմի պարտադիր զինծառայողները անցնում են ուսումնական պատրաստության ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով և ժամկետում։

Հոդված 27. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին պաշտոնի նշանակելը, զինվորական կոչումներ շնորհելը, ծառայության այլ վայր տեղափոխելը

1. Ծառայության վայր նշանակված շարքային կազմի պարտադիր զինծառայողները ծառայության վայրի զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) հրամանով գրանցվում են զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներում, վերցվում են պարենային, իրային և դրամական բավարարման, նշանակվում են զինվորական պատրաստության ծրագրով նախատեսված ուսումնական ստորաբաժանումների պաշտոնների, և նրանց շնորհվում է «շարքային» զինվորական կոչում։

2. Զինվորական երդում տված շարքային կազմի պարտադիր զինծառայողները զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) հրամանով նշանակվում են ոչ հրամանատարական կազմի շարքային խմբի պաշտոնների, նրանց ամրակցվում են զենք և համապատասխան զինամթերք, սպառազինություն կամ ռազմական տեխնիկա, անհատական պաշտպանության միջոցներ։

3. Զինվորական ծառայության ընթացքում շարքային կազմի պարտադիր զինծառայողները սույն օրենքով սահմանված կարգով կարող են նշանակվել կրտսեր հրամանատարական կամ կրտսեր ենթասպայական խմբերի պաշտոնների, ինչպես նաև նրանց կարող են շնորհվել «եֆրեյտոր» կամ կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչումներ՝ փոխադրելով կրտսեր ենթասպայական կազմ։

4. Սպայական կազմի պարտադիր զինծառայողները ծառայության վայրերում նշանակվում են ոչ հրամանատարական կազմի կրտսեր սպայական խմբի պաշտոնի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով, գրանցվում են զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներում, վերցվում են պարենային, իրային և դրամական բավարարման, նրանց ամրակցվում են զենք և համապատասխան զինամթերք, անհատական պաշտպանության միջոցներ։

5. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայության այլ վայր կարող են տեղափոխվել՝

1) ծառայողական անհրաժեշտությունից ելնելով։

2) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ։

3) ընտանեկան պայմաններից ելնելով։

4) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն։

5) ռազմաուսումնական հաստատությունից հեռացվելու (ազատվելու) կամ առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ձանաչվելու դեպքում։

6. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ծառայության ընթացքում կարող են իրենց համաձայնությամբ կնքել պայմանագիր և անցնել պայմանագրային զինվորական ծառայության՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով։

Հոդված 28. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդը և բուժման մեջ գտնվելը

1. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները։

1) հիմնական։

2) լրացուցիչ։

3) հիվանդության պատճառով (վերականգնողական)։

4) ամսական։

2. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

- 1) հերթական.
- 2) լրացուցիչ.
- 3) հիվանդության պատճառով (վերականգնողական):

3. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արձակուրդ տալու դեպքում տրվում է նաև արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև երկու օրացուցային օր ընդհանուր ժամկետով:

4. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին հիմնական արձակուրդ տրվում է ծառայության ընթացքում մեկ անգամ՝ ոչ պակաս, քան հինգ ամսվա օրացուցային ծառայության դեպքում, զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ օրացուցային տարվա համար սահմանված արձակուրդների տրման ժամանակացույցի համաձայն: Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս արձակուրդի տրման հերթականությունը որոշվում է՝ հաշվի առնելով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և զինծառայողի բարեխիղճ ծառայությունը: Հիմնական արձակուրդ տրվում է՝

- 1) շարքային կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օրացուցային օր.
- 2) կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օրացուցային օր:

5. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին յուրաքանչյուր տարվա համար հերթական արձակուրդը տրվում է՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

6. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է հինգ օրացուցային օր տևողությամբ՝

- 1) զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար՝ խրախուսման կարգով.
- 2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողին երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում.

3) սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմաններ ունեցողներին՝ վեց ամիսը մեկ անգամ:

7. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողին երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում՝ հինգ օրացուցային օր տևողությամբ:

8. Շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով) տեղեկանքի հիման վրա:

9. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ձանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից զինծառայողին կարող է տրվել արձակուրդ մինչև 30 օրացուցային օր տևողությամբ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

10. Հիմնական կամ հերթական կամ լրացուցիչ արձակուրդի ընթացքում հիվանդացած շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողի հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում տրված արձակուրդի ժամկետում:

11. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել անընդմեջ 90 օրացուցային օրը: Բուժման ավարտից հետո շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից, որի արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կարող է երկարաձգել բուժման մեջ գտնվելու ժամկետը՝ մինչև 30 օրացուցային օր, կամ սահմանել վերականգնողական ժամկետ՝ մինչև 30 օրացուցային օր: Երկարաձգված բուժման կամ վերականգնողական ժամկետի ավարտից հետո շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները կրկին ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության: Ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից տրվում է զինծառայողի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը ներառում է զինծառայողի առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, զինվորական ծառայությանը պիտանիության աստիճանը, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինծառայողի առողջական վիճակին: Զինծառայողի առողջական վիճակի եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը նրա պիտանիության աստիճանից, նշվում են՝

- 1) պիտանի է զինվորական ծառայության համար.
- 2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.
- 4) կարիք ունի ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով.
- 5) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
- 6) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար:

12. Ամսական արձակուրդ տրվում է սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված շարքային կազմի պարտադիր զինծառայողներին՝ ծառայության վեց ամիսը լրանալուց հետո՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում յոթ օրացուցային օր ժամկետով: Սույն մասում նշված շարքային կազմի պարտադիր զինծառայողներին սույն հոդվածով սահմանված հերթական արձակուրդը տրվում է մինչև սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը, իսկ լրացուցիչ արձակուրդ տրվում է միայն սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքերում:

13. Սույն հոդվածով սահմանված արձակուրդների տրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

Հոդված 29. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելը

1. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են՝

- 1) սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու դեպքում.
- 2) վաղաժամկետ՝

ա. սույն օրենքի 28-րդ հոդվածի 11-րդ մասի 6-րդ կետի համաձայն առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում,

բ. սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կամ 4-րդ կամ 6-րդ մասերով սահմանված ընտանեկան պայմաններից ելնելով, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շարքային կազմի պարտադիր զինծառայողների,

գ. զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով մահացած ճանաչվելու դեպքում:

2. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատագրված նրանց օգնության և պատիժ կրող շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողները դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են զորամասի անձնակազմի ցուցակներից և հաշվառվում են իրենց զորակոչի իրականացրած զինվորական կոմիսարիատի համապատասխան բաժիններում, իսկ ազատագրված վայրում պատժի կրումից ազատվելուց հետո հայտարարված զորակոչի ժամանակ ենթակա են զորակոչման պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու, բացառությամբ սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաև եթե չեն օգտվում սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով կամ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունքից, որոնց առկայության պարագայում հաշվառվում են պահեստագործում՝ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված կարգով, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շարքային կազմի պարտադիր զինծառայողների:

3. Սույն հոդվածի 1-ին մասի համաձայն շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները զինվորական ծառայությունից արձակվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու դեպքում զինծառայողին տրամադրվում են նաև նրա առողջական վիճակի վերաբերյալ առկա փաստաթղթերը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի և 2-րդ մասի հիման վրա առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստագործում հաշվառված քաղաքացիները երեք տարին մեկ ենթակա են բժշկական վերափորձաքննության, որի արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելու դեպքում շարքային կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 35 տարին լրանալը, ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը, բացառությամբ սույն օրենքի 26-րդ մասի 5-րդ կետով նախատեսված զինծառայողների, որոնք զորակոչի միջոցով ուղարկվում են շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը՝ անկախ պարտադիր զինվորական ծառայության ծառայած ժամկետից:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի և 2-րդ մասի հիման վրա ընտանեկան պայմաններից ելնելով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստագործում հաշվառված շարքային կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 35 տարին լրանալը, ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե զինվորական ծառայությունից արձակվելու հիմք հանդիսացած հանգամանքները վերացել են, և նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը:

ԱՍԺԻՆ 4

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒԻՆ 7

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏՈՒԻՔԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 30. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու կարգը և պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրային զինվորական ծառայություն կարող են անցնել՝

- 1) 18 տարին չլրացած քաղաքացիները՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու դեպքում.
- 2) պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված անձինք.

3) նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն չանցած և մինչև 36 տարեկան՝ պահեստագործում հաշվառված արական սեռի քաղաքացիները և իգական սեռի քաղաքացիները՝ անկախ պահեստագործում հաշվառված լինելու հանգամանքից:

2. Պայմանագրային զինվորական ծառայության չի կարող ընդունվել այն քաղաքացին՝

- 1) որն օրենքի խախտումով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն.
- 2) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, կամ որն ունի չհանված կամ չմարված դատավճիռ.
- 3) որն առողջական վիճակի պատճառով պիտանի չէ զինվորական ծառայության համար:

3. Պայմանագրի կնքելը մերժելու դեպքում պետական լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցել քաղաքացուն՝ նշելով մերժման հիմքերը և պատճառները:

4. Պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը սահմանվում է՝

- 1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի զինվորական կոչումներ ունեցող

զինծառայողների համար՝ մինչև 45 տարեկանը.

2) կրտսեր սպայական կազմի զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 48 տարեկանը.

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 50 տարեկանը.

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող զինծառայողների համար՝ մինչև 55 տարեկանը.

5) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-մայոր» և «գեներալ-լեյտենանտ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 60 տարեկանը.

6) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-գնդապետ» և «բանակի գեներալ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 65 տարեկանը:

5. Սահմանային տարիքի հասած և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած մասնագիտությունների ցանկում ներառված մասնագիտություն ունեցող շարքային կազմի և ռազմաբժշկական կամ ռազմադասախոսական բնույթի որոշակի պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 10 տարի ժամկետով, յուրաքանչյուր դեպքում՝ մեկական տարով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով և կոլեգիալ որոշման հիման վրա:

Հոդված 31. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիրը

1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) պետական լիազոր մարմնի և քաղաքացու (զինծառայողի) միջև կնքվող գրավոր համաձայնություն է՝ սույն օրենքի պահանջների հիման վրա պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետով զինվորական ծառայություն անցնելու մասին: Զինվորական ծառայություն անցնելու պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատվում են համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից: Պայմանագրի օրինակների վրա դրվում է պետական լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերն ունեցող կնիք:

3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրելու դեպքում իրավաբանի (պետի) հրամանով հայտարարվելու օրվանից: Պայմանագրի ժամկետը հաշվարկվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո դրա առաջին օրինակը կարվում է զինծառայողի անձնական գործում, երկրորդը հանձնվում է զինծառայողին:

4. Պայմանագրերը կարող են լինել առաջին կամ հերթական կամ նոր: Առաջին պայմանագիր է համարվում առաջին անգամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող քաղաքացու (զինծառայողի) հետ կնքվող պայմանագիրը: Հերթական պայմանագիր է համարվում պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի հետ նախորդ պայմանագրի ժամկետը լրանալու կամ սույն օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում կնքվող պայմանագիրը: Նոր պայմանագիր է համարվում նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն անցած և զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների հետ կրկին պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դեպքում կնքվող պայմանագիրը:

Հոդված 32. Առաջին պայմանագիրը կնքելու կարգը

1. Առաջին պայմանագիրը կնքվում է՝

1) սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված քաղաքացիների հետ.

2) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչված բարձրագույն կոթբայություն ունեցող զինծառայողի հետ՝ սպայական դասընթաց ավարտելուց հետո՝ փոխադրելով սպայական կազմ.

3) սերժանտական դասընթաց ավարտած շարքային կազմի պարտադիր զինծառայողի հետ՝ փոխադրելով ենթասպայական կազմ.

4) շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայություն անցնող և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացրած զինծառայողի հետ.

5) ռազմաուսումնական հաստատություն ընդունված՝ 18 տարին չլրացած քաղաքացու կամ մինչև 23 տարեկան պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողի կամ պահեստագործում հաշվառված արական սեռի կամ իգական սեռի քաղաքացու հետ՝ ռազմաուսումնական հաստատությունում որպես կուրսանտ գրանցելու հետ միաժամանակ: Սույն կետով սահմանված՝ 18 տարին չլրացած քաղաքացու հետ պայմանագիր կնքելու պարտադիր պայման են նրա օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև քաղաքացու 18 տարին լրանալուց հետո վերջինիս կողմից պայմանագրի վերականգնումը: Սույն կետում նշված պայմանագրում ներառման պարտադիր պայման են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետներում հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորության, ինչպես նաև ուսումնառության կամ հետուսումնական պայմանագրային ծառայության ընթացքում պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում պարտավորության չկատարման համար սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն ծագող իրավական հետևանքի նախատեսումը.

6) պետական լիազոր մարմնի պատվերով, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն ուսումնառություն անցած քաղաքացիների հետ՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելուց հետո՝ փոխադրելով սպայական կամ ենթասպայական կազմ: Սույն կետում նշված պայմանագրում ներառման պարտադիր պայման են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետներում հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորության, ինչպես նաև հետուսումնական պայմանագրային ծառայության ընթացքում պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում պարտավորության չկատարման համար սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասի համաձայն ծագող հետևանքների նախատեսումը:

2. Համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ անցնելու ցանկություն հայտնած շարքային կազմի պարտադիր կամ պայմանագրային զինծառայողների, ինչպես նաև ակադեմիական ուսումնառության գործողված կամ պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական կամ բարձրագույն կամ հետբուհական կրթական ծրագրով համապատասխան ուսումնական հաստատություններում, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի

համաձայն ուսումնառություն անցնող՝ զինվորական ծառայության մեջ չգտնվող քաղաքացիների և (կամ) զինծառայողների հետ կնքվում է ուսումնառություն անցնելու մասին քաղաքացիաիրավական պայմանագիր, որը չի համարվում զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր: Սույն մասում նշված պայմանագրում ներառման պարտադիր պայման են սույն օրենքով սահմանված ժամկետում հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորության, ինչպես նաև ուսումնառության և (կամ) հետուսումնական պայմանագրային ծառայության ընթացքում համապատասխան պայմանագրի գործողությունը քաղաքացու և/կամ զինծառայողի կողմից՝ անկախ պատժառանքներից, ինչպես նաև սույն օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցվելու դեպքում զինվորական ծառայության մեջ չգտնվող քաղաքացիների և (կամ) զինծառայողների համար պարտավորության չկատարման արդյունքում սույն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասի համաձայն ծագող հետևանքների նախատեսումը:

3. Առաջին պայմանագրի ժամկետը սահմանվում է՝

1) ոչ հրամանատարական շարքային խմբի զինվորական պաշտոնի նշանակվողի համար՝ երեք տարի:
2) հրամանատարական կազմի կրտսեր հրամանատարական խմբի կամ ոչ հրամանատարական կազմի կրտսեր սպայական կամ ավագ ենթասպայական կամ կրտսեր ենթասպայական խմբերի զինվորական պաշտոնների նշանակվողի համար՝ երեք տարի:

3) ռազմաուսումնական հաստատություն ընդունված զինծառայողների համար՝ համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառության և հետուսումնական 10 տարի:

4) ակադեմիական ուսումնառությունը կամ պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն կամ հետբուհական, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ուսումնական հաստատություններ ավարտած անձանց համար՝ 3-5 տարի:

5) պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ավարտած անձանց կամ սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած զինծառայողների համար՝ 2-3 տարի:

4. Առաջին պայմանագիրը պետական լիազոր մարմնի կողմից ստորագրում են՝

1) համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը՝ բարձրագույն հրամանատարական կամ բարձրագույն սպայական խմբերի զինվորական պաշտոնի նշանակվող զինծառայողների հետ:

2) պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք՝ սույն մասի 1-ին կետում նշված մյուս սպայական, ենթասպայական, շարքային կազմերի համապատասխան խմբերի զինվորական պաշտոնի նշանակվող զինծառայողների հետ:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված քաղաքացիաիրավական պայմանագրերը ստորագրում է համապատասխան պետական լիազոր մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարը:

Հոդված 33. Հերթական կամ նոր պայմանագրերի կնքման կարգը

1. Չհինձառայողի հետ հերթական պայմանագիր կնքվում է հետևյալ դեպքերում.

1) նախորդ պայմանագրի ժամկետը լրանալիս (իր համաձայնությամբ):

2) պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություն կամ սպայական կամ սերժանտական դասընթացներ կամ ակադեմիական կրթություն, ինչպես նաև պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական կամ բարձրագույն կամ հետբուհական կրթական ծրագրով ուսումնառություն ավարտելիս այն դեպքերում, եթե տվյալ պահին գործող զինվորական ծառայության պայմանագրի մնացած ժամկետը պակաս է սույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ժամկետով կնքվելիք պայմանագրի ժամկետից:

3) պետական լիազոր մի մարմնից մյուսը փոխադրվելիս:

4) զինվորական ծառայության մեջ սահմանային տարիքի հասնելու և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնելիս:

2. Ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած զինծառայողը հերթական պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող պետի անունով ներկայացնում է զեկուցագիր՝ գործող պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն մեկ ամիս առաջ: Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար կամ բուժման նպատակով արձակուրդում գտնվելու պատճառով հերթական պայմանագիր կնքելու հնարավորություն չունեցող պայմանագրային զինծառայողները շարունակում են զինվորական ծառայությունը՝ պայմանագրային հիմունքներով: Նշված հանգամանքների վերացումից հետո՝ ծառայության վայր ներկայանալուց մեկ ամսվա ընթացքում, ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած զինծառայողը հերթական պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող պետի անունով ներկայացնում է զեկուցագիր: Ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած զինծառայողի հետ հերթական պայմանագիր կնքելու որոշում կայացնում են սույն օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պաշտոնատար անձինք:

3. Հերթական պայմանագրի չկնքող պայմանագրային զինծառայողը ներկայացվում է զինվորական ծառայությունից արձակման՝ պայմանագրի ժամկետը լրանալու հիմքով:

4. Նոր պայմանագիր կնքվում է նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն անցած, պահեստազորում հաշվառված և կրկին պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացու հետ՝ հաշվի առնելով սույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված պայմանները:

5. Հերթական կամ նոր պայմանագրերը պետական լիազոր մարմնի անունից ստորագրում են սույն օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասում նշված պաշտոնատար անձինք:

Հոդված 34. Պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու պայմանները

1. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

1) սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում՝ զինծառայողին զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը:

2) զինծառայողի հետ հերթական պայմանագիր կնքելու դեպքում՝ հերթական պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը:

3) սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝ զինծառայողին տեղափոխող մարմնի անձնակազմի ցուցակներում գրանցելու օրը:

4) օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն չանցած զինծառայողին ռազմաուսումնական հաստատությունից ազատելիս (հեռացնելիս)՝ ռազմաուսումնական հաստատության անձնակազմի

ցուցակներից հանելու օրը.

5) սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերի ծագման օրը:

2. Պայմանագրի գործողությունը կասեցվում է՝

1) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերում նշված դեպքերում՝ մինչև նշված կետերով նախատեսված հանգամանքները վերանալու օրը.

2) զինծառայողի կողմից գործառնալը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու ժամանակահատվածում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զինծառայողին կալանքի ձևով պատժի դատապարտելիս՝ մինչև պատժի կրման ավարտի օրը.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած իգական սեռի զինծառայողին երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրելիս՝ մինչև արձակուրդի ավարտի օրը:

3. Պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու դեպքում պայմանագրի օրինակներում կատարվում է դադարման կամ կասեցման հիմքի մասին համապատասխան գրառում՝ ամսաթվի և տարեթվի նշումով:

ԳԼՈՒԽ 8

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ԱԶԱՏԵԼԸ, ԿԱՂԵՐԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՎՅՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՂԵԼԸ

Հոդված 35.

Պայմանագրային զինծառայողներին զինվորական պաշտոնի նշանակելու կարգը և պայմանները

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնի նշանակվում է՝ հաշվի առնելով զինծառայողի համապատասխանությունը տվյալ պաշտոնին, մասնագիտական ու ծառայողական ունակությունները, հոգեբանական որակները, առողջական վիճակը և սույն օրենքով նախատեսված այլ պայմաններ: Պայմանագրային զինծառայողը նշանակվում է իր հիմնական կամ հարակից զինվորական մասնագիտությանը համապատասխանող զինվորական պաշտոնի՝ հաշվի առնելով ծառայողական գործունեության փորձը: Պայմանագրային զինծառայողի՝ նոր մասնագիտական զինվորական պաշտոնի նշանակմանը պետք է նախորդի համապատասխան վերապատրաստումը:

2. Բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական խմբերի զինվորական պաշտոնների կարող է նշանակվել այն պայմանագրային զինծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն երեք տարի ժամկետով զբաղեցրել է զինված ուժերի կամ այլ զորքերի ավագ հրամանատարական խմբի պաշտոն և ունի գնդապետից ոչ ցածր զինվորական կոչում կամ մինչև նշանակումն այլ պետական մարմիններում առնվազն երեք տարի զբաղեցրել է զինված ուժերի ավագ հրամանատարական կամ բարձրագույն սպայական խմբերի պաշտոններին համապատասխանող պաշտոն և ունի զինված ուժերի գնդապետից ոչ ցածր համապատասխան հատուկ կոչում (դասային աստիճան):

3. Ավագ հրամանատարական կամ ավագ սպայական խմբերի զինվորական պաշտոնների կարող է նշանակվել այն պայմանագրային զինծառայողը, որը մինչև նշանակումն առնվազն երեք տարի զբաղեցրել է միջին հրամանատարական խմբի զինվորական պաշտոն կամ մինչև նշանակումն այլ պետական մարմիններում առնվազն երեք տարի զբաղեցրել է զինված ուժերի միջին հրամանատարական կամ ավագ սպայական խմբերի պաշտոններին համապատասխանող պաշտոն և ունի բարձրագույն զինվորական (մասնագիտական) կրթություն:

4. Միջին հրամանատարական խմբի զինվորական պաշտոնների կարող են նշանակվել բարձրագույն կրթությամբ կրտսեր սպայական կոչում ունեցող պայմանագրային զինծառայողները:

5. Կրտսեր հրամանատարական խմբի զինվորական պաշտոնների կարող են նշանակվել սպայական կամ ենթասպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած կամ համապատասխան ռազմահաշվառական մասնագիտություն ունեցող պայմանագրային զինծառայողները: Զինվորական պաշտոնին համապատասխանող ռազմահաշվառական մասնագիտությունների ցանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

6. Զինվորական պաշտոնի նշանակելիս պահպանվում են հետևյալ պայմանները.

1) հրամանատարական և ոչ հրամանատարական խմբերի զինվորական պաշտոնների նշանակվում են համապատասխան կազմերի պայմանագրային զինծառայողներ: Այն պաշտոնների ցանկը (բացառությամբ բարձրագույն հրամանատարականի և բարձրագույն սպայականի), որոնք կարող են համալրվել ստորադաս կազմերի պայմանագրային զինծառայողներով, սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը.

2) ռազմաթճշկական հանձնաժողովի կողմից զինվորական ծառայության համար պիտանի, սակայն ունեցած ռազմահաշվառական մասնագիտությանը ոչ պիտանի ձանաչված պայմանագրային զինծառայողն իր համաձայնությամբ կարող է նշանակվել այլ ռազմահաշվառական մասնագիտությամբ զինվորական պաշտոնի.

3) եթե պայմանագրային զինծառայողին չի տրվում պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն, ապա նա նշանակվում է այդպիսի թույլտվություն չպահանջող պաշտոնի.

4) պայմանագրային զինծառայողին չի թույլատրվում նույն զորամասում համատեղ ծառայել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ.

5) պայմանագրային զինծառայողները պաշտոնի (բացառությամբ բարձրագույն հրամանատարականի և բարձրագույն սպայականի) նշանակվում են անձնակազմին վերաբերող հրամաններով, որ արձակում է տվյալ զինվորական պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պետը.

6) ռազմաուսումնական հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա (ադյունկտուրա), դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ավարտած զինծառայողը նշանակվում է իր ռազմահաշվառական կամ բարձրագույն կրթությանը համապատասխանող զինվորական պաշտոնի, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախկինում զբաղեցրած պաշտոնից ոչ ցածր պաշտոնի:

7. Պայմանագրային զինծառայողներին զինվորական պաշտոնի (բացառությամբ բարձրագույն հրամանատարականի և

բարձրագույն սպայականի) նշանակումն իրականացվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

8. Ռազմաբժշկական կամ ռազմաուսումնական հաստատությունների մասնագիտական կամ պրոֆեսորադասախոսական բնույթի պաշտոններում կարող են նշանակվել նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող անձինք՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Հոդված 36. Պայմանագրային զինծառայողին բարձր զինվորական պաշտոնի նշանակելը

1. Պայմանագրային զինծառայողը նշանակվում է բարձր պաշտոնի՝
 - 1) ծառայության մեջ առաջխաղացման կարգով.
 - 2) մրցույթի կամ ատեստավորման արդյունքներով.
 - 3) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ:
2. Մրցութային կարգով նշանակման ենթակա պաշտոնների ցանկը, նշանակման կարգը և պայմանները սահմանում է պետական լիազոր մարմինը:
3. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով պատժի դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու, ինչպես նաև իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելու կամ ծառայողական քննություն նշանակված լինելու դեպքերում պայմանագրային զինծառայողը չի կարող բարձր պաշտոնի նշանակվել մինչև սահմանված փորձաշրջանի կամ քրեական գործի կամ ծառայողական քննության ավարտը, իսկ ազատագրվածն հետ չկապված պատժի դատապարտված կամ կարգապահական տույժ ստացած պայմանագրային զինծառայողը՝ մինչև դատավճիռները կամ կարգապահական տույժը հանելը կամ մարելը:

Հոդված 37. Պայմանագրային զինծառայողին հավասար զինվորական պաշտոնի նշանակելը

1. Պայմանագրային զինծառայողը նշանակվում է հավասար պաշտոնի՝
 - 1) ծառայողական անհրաժեշտությունից (այդ թվում՝ ծառայության մեջ նրա կարողություններն առավել նպատակային օգտագործելու անհրաժեշտությունից) ելնելով.
 - 2) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ.
 - 3) ընտանեկան պայմաններից ելնելով (իր զեկուցագրի համաձայն).
 - 4) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն:

Հոդված 38. Պայմանագրային զինծառայողին ցածր զինվորական պաշտոնի նշանակելը

1. Պայմանագրային զինծառայողը նշանակվում է ցածր պաշտոնի՝
 - 1) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, եթե հնարավոր չէ նշանակել հավասար պաշտոնի (իր համաձայնությամբ).
 - 2) ծառայողական անհրաժեշտությունից ելնելով (իր համաձայնությամբ).
 - 3) ընտանեկան պայմաններից ելնելով (իր համաձայնությամբ).
 - 4) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն (իր համաձայնությամբ).
 - 5) «պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ ստանալու դեպքում, ինչպես նաև եթե «նախագուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժ ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, այլ կարգապահական խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.
 - 6) եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է զինվորական ծառայության սահմանափակման այնպիսի պատժի, որը բացառում է իր զբաղեցրած պաշտոնում հետագա պաշտոնավարումը.
 - 7) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում:

Հոդված 39. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակելու կարգը

1. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանագրային զինծառայողը կարող է իր համաձայնությամբ նշանակվել հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող՝
 - 1) թափուր զինվորական պաշտոնի՝ մինչև վեց ամիս ժամկետով.
 - 2) զինվորական պաշտոնն զբաղեցնող զինծառայողի ժամանակավոր բացակայության դեպքում՝ մինչև չորս ամիս ժամկետով (արձակուրդի, բացառությամբ՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվելու, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության, մեկ ամսից ավելի ժամկետով գործուղման դեպքերում): Երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակվում են պաշտոնն զբաղեցնողի՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվելու ժամկետի ընթացքում:
2. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակվում և ազատում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը): Թափուր պաշտոնի կամ հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողի պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակված պայմանագրային զինծառայողին հաշվարկվում է տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:
3. Զինվորական պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակվում են՝
 - 1) շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները՝ այն զինվորական պաշտոններին, որոնց համար հաստիքով նախատեսված են ավագ ենթասպայական կազմի կամ կրտսեր սպայական կազմի զինվորական կոչումներ.
 - 2) ավագ ենթասպայական կազմի զինծառայողները՝ այն զինվորական պաշտոններին, որոնց համար հաստիքով նախատեսված են ավագ ենթասպայական կազմի կամ կրտսեր սպայական կազմի զինվորական կոչումներ.
 - 3) կրտսեր սպայական կազմի զինծառայողները՝ այն զինվորական պաշտոններին, որոնց համար հաստիքով

նախատեսված են կրտսեր և ավագ սպայական կազմերի զինվորական կոչումներ.

4) ավագ սպայական կազմի զինծառայողները՝ այն զինվորական պաշտոններին, որոնց համար հաստիքով նախատեսված են ավագ և բարձրագույն սպայական կազմերի զինվորական կոչումներ:

4. Առանձնահատուկ դեպքերում թափուր զինվորական (բացառությամբ հրամանատարական կազմի) պաշտոնի կարող է նշանակվել նաև զինվորական ծառայության մեջ չգտնվող անձը՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Հոդված 40. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնից ազատվում է՝

1) այլ պաշտոնի նշանակվելու դեպքում.

2) հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման պատճառով.

3) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու կամ կարգապահական տույժի կարգով.

4) զինծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելիս և կալանքը որպես խափանման միջոց ընտրվելիս կամ հարուցված քրեական հետապնդման շրջանակներում նրա պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշում կայացնելիս.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում.

6) հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.

7) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված դեպքում.

8) մեկ ամսից ավելի ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու դեպքում.

9) գերության մեջ գտնվելու դեպքում.

10) ռազմաուսումնական հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ վեց ամիսը գերազանցող ժամկետով Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում.

11) զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում:

2. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատում է տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը):

Հոդված 41. Պայմանագրային զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը

1. Պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ մեկ ամսից ոչ ավելի, իսկ հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող պայմանագրային զինծառայողի հաստիքը կրճատվելու դեպքում՝ մինչև արձակուրդի ավարտը.

2) 4-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշման կայացվելը, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ժամկետը լրանալը, իսկ զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ վեց ամսից ոչ ավելի, բացառությամբ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների, որոնց պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետը չի ավարտվել.

3) 5-րդ կետով սահմանված՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում՝ պատժի կրման ամբողջ ժամկետով.

4) 6-րդ կետով սահմանված դեպքում (ներառյալ՝ արձակումը ձևակերպելու ժամկետը)՝ 1 ամսից ոչ ավելի.

5) 7-րդ կետով սահմանված դեպքում՝ երեք ամսից ոչ ավելի.

6) 8-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.

7) 9-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ազատվելը.

8) 10-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ուսումնառության ավարտը:

2. Պայմանագրային զինծառայողներին կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

Հոդված 42. Պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու և գործուղելու կարգը

1. Պայմանագրային զինծառայողը ծառայության նոր վայր տեղափոխվում է հետևյալ դեպքերում.

1) ծառայողական անհրաժեշտությունից ելնելով.

2) առաջխաղացման կարգով.

3) առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա (իր համաձայնությամբ).

4) ընտանեկան պայմաններից ելնելով (իր խնդրանքով).

5) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ.

6) այլանային փոխարինման կարգով.

7) ռազմաուսումնական հաստատություն, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա, ինտերնատուրա ընդունվելու կապակցությամբ.

8) ռազմաուսումնական հաստատությունից, ասպիրանտուրայից, դոկտորանտուրայից, կլինիկական օրդինատուրայից, ինտերնատուրայից ազատվելու (հեռացվելու) պատճառով.

9) եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակվել է որոշակի պաշտոններ զբաղեցնելու

սահմանափակման հետ կապված պատիժ:

2. Պայմանագրային զինծառայողը, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, ծառայության նոր վայր տեղափոխվում է հավասար պաշտոնի նշանակմամբ: Տեղափոխությունը կատարվում է առանց զինծառայողի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի (կին, անչափահաս, մինչև 23 տարեկան՝ սովորող կամ հաշմանդամություն ունեցող երեխա, խնամքի տակ գտնվող և համատեղ բնակվող անաշխատունակ անձ) համար, ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, տեղափոխման վայրը հակացուցված է:

3. Պայմանագրային զինծառայողը առաջխաղացման կարգով ծառայության նոր վայր տեղափոխվում է բարձր պաշտոնի նշանակմամբ:

4. Պայմանագրային զինծառայողը, ընտանեկան պայմաններից ելնելով, ծառայության նոր վայր տեղափոխվում է՝

1) եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված ընտանիքի անդամի համար ծառայության վայրը հակացուցված է.

2) բնակության վայրի բժշկասոցիալական փորձաքննության մարմնի եզրակացության համաձայն՝ առանձին ապրող հոր, մոր, քրոջ, եղբոր, պապի, տատի, որդեգրողի մշտական կողմնակի խնամքի անհրաժեշտությունից ելնելով:

5. Պայմանագրային զինծառայող ամուսիններից մեկին, սույն հոդվածի համաձայն, ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում միաժամանակ որոշում է կայացվում ծառայության նոր վայր տեղափոխել նաև մյուս ամուսնուն, եթե փոխվում է ընտանիքի բնակության վայրը: Եթե հնարավոր չէ զինծառայող ամուսիններին ծառայության նոր վայրում միաժամանակ նշանակել զինվորական պաշտոնների, ապա տեղափոխությունը կատարվում է միայն զինծառայողի համաձայնությամբ:

6. Պայմանագրային զինծառայողը ծառայության նոր վայր մեկնում է գործերը և պաշտոնը հանձնելուց հետո՝ տեղափոխման հրամանն ստանալու օրվանից ոչ ուշ՝ քան 30-օրյա ժամկետում, բացառությամբ արձակուրդում, գործուղման կամ բուժման մեջ գտնվելու դեպքերի:

7. Պայմանագրային զինծառայողների ուսման կամ ծառայության, ինչպես նաև ծառայողական գործուղումներն իրականացվում են սույն օրենքով և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

Հոդված 43.

Պայմանագրային զինծառայողի պլանային փոխարինման կարգով տեղափոխումը

1. Պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխման ենթակա են հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողները: Հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունը և տեղափոխման կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Տեղափոխվող պայմանագրային զինծառայողները չեն օգտվում ծառայության նոր վայրն ընտրելու իրավունքից: Նրանք նշանակվում են հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի՝ իրավասու: պաշտոնատար անձի հրամանով:

2. Պայմանագրային զինծառայողը կարող է հրաժարվել պլանային փոխարինումից և շարունակել ծառայությունը հատուկ կամ կլիմայական ծանր պայմաններում, որի դեպքում ծառայության լրացուցիչ ժամկետը սահմանվում է նրա համաձայնությամբ՝ մեկ տարուց ոչ պակաս: Պլանային փոխարինումից հրաժարվելու մասին պայմանագրային զինծառայողի ստորագրությամբ նշում է կատարվում պայմանագրային զինծառայողի անձնական գործում:

3. Պլանային փոխարինման կարգով տեղափոխությունը կարող է կատարվել պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան մեկ տարի, ինչպես նաև պայմանագրային զինծառայողի՝ ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալուց ոչ ուշ, քան երեք տարի առաջ:

4. Պայմանագրային զինծառայողին հատուկ և կլիմայական ծանր պայմաններ ունեցող ծառայության վայր կրկին տեղափոխելու իրականացվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Հոդված 44.

Պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելը

1. Պայմանագրային զինծառայողը կարող է տեղափոխվել հետագա ծառայությունը շարունակելու՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգից՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգեր կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն:

2) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգեր կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն:

3) Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգեր կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն:

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայությունից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգեր:

2. Պայմանագրային զինծառայողի տեղափոխությունը կատարվում է նրա խնդրանքով կամ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորություն ունեցող զինծառայողի տեղափոխությունը հիմք չէ տեղափոխությունից հետո պայմանագրային պարտավորությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում սույն օրենքով ծագող իրավական հետևանքները չկիրառելու համար:

3. Տեղափոխվող զինծառայողի անունը հանվում է համապատասխան մարմնի անձնակազմի ցուցակներից և գրանցվում տեղափոխված մարմնի անձնակազմի ցուցակներում: Ընդ որում, մինչև տեղափոխված մարմնի անձնակազմի ցուցակներում գրանցվելու օրը նա համարվում է համապատասխան մարմնի ծառայող:

Հողված 45.

Պայմանագրային զինծառայողին այլ մարմիններ գործուղման կարգը և զինվորական ծառայության անցման առանձնահատկությունները

1. Սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները կարող են գործուղվել պետական մարմիններ, կազմակերպություններ, հիմնարկներ և ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ այլ մարմիններ)՝ հետագա ծառայությունը շարունակելու: Գործուղումն իրականացվում է պայմանագրային զինծառայողի համաձայնությամբ՝ այլ մարմնի հարցման հիման վրա:

2. Գործուղված զինծառայողների հետ հերթական պայմանագիր կնքում է պետական լիազոր մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարը՝ պետական լիազոր մարմնի ղեկավարին ներկայացված այն մարմնի ղեկավարի միջնորդությամբ, որտեղ գործուղվել է զինծառայողը:

3. Գործուղված պայմանագրային զինծառայողի զինվորական կոչման շնորհումը, զինվորական ծառայությունից արձակումը, գերատեսչական և պետական պարգևներով պարգևատրումը կատարվում են ընդհանուր հիմունքներով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարին ներկայացված այն մարմնի ղեկավարի միջնորդությամբ, որտեղ գործուղվել է զինծառայողը:

4. Գործուղման անհրաժեշտությունը վերանալուց հետո պայմանագրային զինծառայողներն ուղարկվում են գործուղող մարմին՝ նրանց հետագա զինվորական ծառայության վերաբերյալ որոշում ընդունելու համար: Զինվորական ծառայությունը շարունակելու ցանկություն չհայտնած պայմանագրային զինծառայողն արձակվում է զինվորական ծառայությունից՝ առանց զինվորական պաշտոնի նշանակվելու: Նշված դեպքում պայմանագրային զինծառայողի զինվորական ծառայության ավարտի օր համարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերից (այլ զորքերից) արձակվելու օրը:

ԳԼՈՒԽ 9

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԵՎ ՊԼՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ, ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ

Հողված 46.

Պայմանագրային զինծառայողի անձնական գործը և պաշտոնի անձնագիրը

1. Պայմանագրային զինծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում, որի վարման կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

2. Պայմանագրային զինծառայողի անձնական գործում հաշվառվում են պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման, զինվորական կոչումների շնորհման, ռազմական և այլ կրթության, ատեստավորման և վերապատրաստումների, օրացուցային և արտոնյալ ժամկետով ծառայության ստաժի, կիրառված խրախուսանքների ու կարգապահական տույժերի, սույն օրենքով սահմանված զինվորական ծառայության և կոչման կրման ժամկետներում չհաշվարկվող ժամանակահատվածների, առողջական վիճակի, ընտանեկան դրության և ընտանիքի կազմի վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Զինվորական պաշտոնի համար սահմանվում է պաշտոնի անձնագիր, որը հանդիսանում է տվյալ պաշտոնն զբաղեցնող զինծառայողի համար սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները նկարագրող և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար զինծառայողին մասնագիտական գիտելիքների ու ծառայողական ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող փաստաթուղթ: Զինվորական պաշտոնների անձնագրերը հաստատվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հողված 47.

Պայմանագրային սպայական կազմի զինծառայողների ատեստավորումը

1. Պայմանագրային սպայական կազմի զինծառայողների (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) ընտրության, մասնագիտական ունակությունների գնահատման, զբաղեցրած պաշտոնին համապատասխանության և առաջխաղացման հեռանկարը որոշելու նպատակով կատարվում է ատեստավորում:

2. Պայմանագրային սպայական կազմի զինծառայողը ատեստավորվում է պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ, բայց զինվորական ծառայության յուրաքանչյուր երեք տարվա ընթացքում՝ առնվազն մեկ անգամ, ինչպես նաև զինծառայողին՝

1) ռազմատուսումնական հաստատություն, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա, ինտերնատուրա ուսումնառության գործուղելիս և ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ զինվորական պաշտոնի նշանակելիս:

2) բարձր պաշտոնի նշանակելիս:

3. Ատեստավորման ենթակա չեն՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող զինծառայողները:

2) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողները: Նշված զինծառայողներն ատեստավորման ենթակա են ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց մեկ տարի հետո:

4. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում կամ գործուղման կամ բուժման մեջ գտնվող զինծառայողները ենթակա են ատեստավորման ծառայության անցնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

5. Ատեստավորման արդյունքներով կայացվում են հետևյալ որոշումները՝

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին:

2) երաշխավորվում է նշանակվելու բարձր պաշտոնի:

3) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին և ենթակա է նշանակվելու ցածր պաշտոնի:

4) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված համապատասխան դեպքերում՝

ա. երաշխավորվում է ուսումնառության գործուղման կամ ենթակա չէ ուսումնառության գործուղման,

բ. ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ երաշխավորվում է նշանակվելու մինչև ուսումնառության գործուղվելը զբաղեցրած պաշտոնից բարձր պաշտոնի կամ նպատակահարմար է նշանակել մինչև ուսումնառության գործուղվելը զբաղեցրած պաշտոնին հավասար պաշտոնի:

5) սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում երաշխավորվում է նշանակվելու բարձր պաշտոնի կամ ենթակա չէ նշանակվելու բարձր պաշտոնի:

6. Ատեստավորվող զինծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին և վերադասության կարգով բողոքարկելու դրանք ատեստավորման արդյունքներին ծանոթանալուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7. Ատեստավորման ենթակա զինծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

8. Ատեստավորման անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև ատեստավորման հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

ԳԼՈՒԽ 10

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՐԺԱԿՈՒՐՈՒՆԵՐԸ

Հոդված 48. Պայմանագրային զինծառայողներին տրվող արձակուրդը

1. Պայմանագրային զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.
 - 1) հերթական.
 - 2) լրացուցիչ.
 - 3) ուսումնական (ռազմաուսումնական հաստատությունում սովորելու ընթացքում).
 - 4) հիվանդության պատճառով (վերականգնողական).
 - 5) կին զինծառայողին՝ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար:
2. Պայմանագրային զինծառայողներին կարող են տրվել նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված այլ արձակուրդներ:
3. Պայմանագրային զինծառայողներին սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված արձակուրդներ տալու դեպքում տրվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև երկու օրացուցային օր ընդհանուր ժամկետով:
4. Պայմանագրային զինծառայողներին սույն հոդվածով նախատեսված արձակուրդներ տալու կարգը և արձակուրդ տալու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) ցանկը սահմանվում են պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հոդված 49. Հերթական արձակուրդը

1. Հերթական արձակուրդի տևողությունը սահմանվում է՝
 - 1) մինչև 15 օրացուցային տարի ծառայած պայմանագրային զինծառայողի համար՝ տարվա ընթացքում 30 օրացուցային օր.
 - 2) 15-25 օրացուցային տարի ծառայած պայմանագրային զինծառայողի համար՝ տարվա ընթացքում 35 օրացուցային օր.
 - 3) 25 և ավելի օրացուցային տարի ծառայած պայմանագրային զինծառայողի համար՝ տարվա ընթացքում 40 օրացուցային օր:
2. Հերթական արձակուրդը պայմանագրային զինծառայողի ցանկությամբ կարող է տրվել մաս-մաս, սակայն ոչ ավելի, քան երկու մասով:
3. Ռազմաուսումնական հաստատությունն ավարտած պայմանագրային զինծառայողին ռազմաուսումնական հաստատությունն ավարտելուց անմիջապես հետո տրվում է հերթական արձակուրդ:
4. Պայմանագրային զինծառայող ամուսինների ցանկությամբ նրանց հերթական արձակուրդը տրվում է միաժամանակ:
5. Հերթական արձակուրդը տրվում է օրացուցային տարվա համար գորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) հաստատած ժամանակացույցի համաձայն՝ գորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և արձակուրդի հավասարաչափ օգտագործման անհրաժեշտությունը հաշվի առնելով:
6. Հերթական արձակուրդի ժամանակը որոշելու իրավունք վերապահվում է՝
 - 1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստացած պայմանագրային զինծառայողներին.
 - 2) մինչև 16 տարեկան երեք և ավելի երեխա ունեցող պայմանագրային զինծառայողներին.
 - 3) հաշմանդամություն ունեցող ամուսին կամ երեխա ունեցող պայմանագրային զինծառայողներին:
7. Եթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառով պայմանագրային զինծառայողը չի օգտվել հերթական և (կամ) սույն օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լրացուցիչ արձակուրդից, ապա դրանք տրվում են հաջորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում:
8. Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած պայմանագրային զինծառայողի արձակուրդը երկարաձգվում է հիվանդության պատճառով չօգտագործած օրերի թվով՝ հինք ընդունելով բուժումն իրականացրած բժշկական հաստատության համապատասխան տեղեկանքը:
9. Հերթական արձակուրդից պայմանագրային զինծառայողին հետ կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ արձակուրդ տրամադրած հրամանատարի (պետի) հրամանով: Նշված դեպքում չօգտագործած արձակուրդի մասը տրամադրվում է նույն տարում, եթե կազմում է 15 օրացուցային օր և ավելի: Չօգտագործած արձակուրդի օրերը պայմանագրային զինծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին:
10. Պայմանագրային զինծառայողների զինվորական ծառայության ընդունվելու և զինվորական ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է դրա ընդհանուր տևողությունը 12-ի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում, ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են՝ ավելացման եղանակով:

Հոդված 50. Լրացուցիչ արձակուրդը

1. Լրացուցիչ արձակուրդը տրվում է՝
 - 1) զինվորական ծառայության առանձնահատուկ կամ վնասակար պայմաններում ծառայող պայմանագրային զինծառայողին՝ 10 օրացուցային օր:
 - 2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ պայմանագրային զինծառայողի ընտանիքի անդամի ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում կամ ուսման կապակցությամբ կամ այլ հարգելի պատճառներով՝ մինչև 10 օրացուցային օր:
2. Պայմանագրային զինծառայողի ցանկությամբ լրացուցիչ արձակուրդը կարող է միացվել հերթական արձակուրդին:

Հոդված 51. Ուսումնական արձակուրդը

1. Ուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնող պայմանագրային զինծառայողին ուսման ընդմիջումների ընթացքում տրվում են՝
 - 1) ծննդային արձակուրդ՝ 15 օրացուցային օր:
 - 2) ամառային արձակուրդ՝ 30 օրացուցային օր:

Հոդված 52. Հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդը

1. Պայմանագրային զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ ռազմաբժշկական հանձնաժողովի տեղեկանքի հիման վրա:
2. Պայմանագրային զինծառայողներին առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից զինծառայողին կարող է տրվել արձակուրդ մինչև 30 օրացուցային օր տևողությամբ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:
3. Հերթական կամ լրացուցիչ արձակուրդի ընթացքում հիվանդացած պայմանագրային զինծառայողի հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում տրված արձակուրդի ժամկետում:
4. Պայմանագրային զինծառայողի առողջարանային բուժումը կազմակերպվում է հերթական արձակուրդի ընթացքում:
5. Պայմանագրային զինծառայողներին բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել անընդմեջ 90 օրացուցային օրը: Բուժման ավարտից հետո պայմանագրային զինծառայողները ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության կենտրոնական կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից, որի արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կարող է երկարաձգել բուժման մեջ գտնվելու ժամկետը՝ մինչև 30 օրացուցային օր, կամ սահմանել վերականգնողական ժամկետ՝ մինչև 30 օրացուցային օր: Երկարաձգված բուժման կամ վերականգնողական ժամկետի ավարտից հետո պայմանագրային զինծառայողները կրկին ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության: Ուսումնական փորձաքննության արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը տալիս է զինծառայողի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը ներառում է զինծառայողի առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, զինվորական ծառայությանը պիտանիության աստիճանը, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինծառայողի առողջական վիճակին: Զինծառայողի առողջական վիճակի եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը նրա պիտանիության աստիճանից, նշվում են՝
 - 1) պիտանի է զինվորական ծառայության համար:
 - 2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար:
 - 3) սահմանափակվումով պիտանի է զինվորական ծառայության համար:
 - 4) կարիք ունի ծառայողական պարտականություններից ազատման՝ մինչև 15 օրացուցային օր ժամկետով:
 - 5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար:
 - 6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար:

Հոդված 53. Կին զինծառայողին հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվող արձակուրդը

1. Կին զինծառայողին՝ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում կին զինծառայողի դրամական ապահովությունը պահպանվում է: Հղիության և ծննդաբերության արձակուրդից առաջ կամ անմիջապես հետո կին զինծառայողին, իր դիմումի համաձայն, տրվում է հերթական արձակուրդ:
3. Կին զինծառայողին իր ցանկությամբ տրվում է երեխայի խնամքի համար արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարին լրանալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին զինծառայողի ծառայության տեղն ու պաշտոնը պահպանվում են:
4. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, հերթական զինվորական կոչում շնորհելու (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածի), զինվորական ծառայությունից արձակվելիս դրամական օգնության չափը և զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար:
5. Հղիության և ծննդաբերության տարում կին զինծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համաձայնաբար մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկու և կես օր հաշվարկով:

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼԸ

Հոդված 54. Պայմանագրային զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու հիմքերը

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է՝
 - 1) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս.
 - 2) զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալիս.
 - 3) պայմանագրի ժամկետը լրանալիս.
 - 4) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.
 - 5) հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման դեպքում, եթե զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի և չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.
 - 6) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի և չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.
 - 7) «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժ կիրառելիս.
 - 8) մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.
 - 9) ռազմաուսումնական հաստատությունից կամ սպայական կամ սերժանտական դասընթացներից կամ ակադեմիական ուսումնառությունից կամ պետական լիազոր մարմնի պատվերով միջին մասնագիտական կամ բարձրագույն կամ հետբուհական ուսումնական հաստատությունից (այսուհետ՝ ուսումնառություն) իր դիմումի համաձայն ազատվելիս կամ անբավարար առաջադիմության կամ անկարգապահության հիմքով հեռացվելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ.
 - 10) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտվելու հիման վրա պատիժ կրելիս կամ զինվորական կոչումից զրկվելիս.
 - 11) զոհվելու (մահանալու) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու դեպքում:
2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերի հիման վրա պայմանագրային զինծառայողն արձակվում է զինվորական ծառայությունից, եթե սույն օրենքով սահմանված կարգով նրա հետ չի կնքվում հերթական պայմանագիր:
3. Սույն օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորություն ունեցող պայմանագրային զինծառայողների համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-8-րդ կետերով սահմանված հիմքերով հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հիմքով՝ ուսումնառության ընթացքում, պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս ծագում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն անպատշաճ կատարելու համար իրավական հետևանք՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության յուրաքանչյուր լրիվ չծառայած տարվա դիմաց ամսական նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով տուժանքի ձևով: Սույն մասով սահմանված իրավական հետևանքի կիրառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում սույն օրենքով սահմանված կարգով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած պայմանագրային զինծառայողը սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ուղարկվում է պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը շարունակելու, իսկ պետական լիազոր մարմնի պատվերով, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատության ռազմաբժշկական ֆակուլտետում ուսումնառություն անցած կամ անցնող զինծառայողների համար ծագում է նաև համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության վճարովի համակարգում տվյալ մասնագիտության գծով ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը բարձրագույն ուսումնական հաստատությանը վճարելու պարտավորություն:

Հոդված 55. Պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու կարգը

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է իր ներկայացրած զեկուցագրի հիման վրա, բացառությամբ երբ արձակումն իրականացվում է առանց նրա հետ համաձայնեցնելու:
2. Եթե առկա են պայմանագրային ծառայությունից արձակելու մեկից ավելի հիմքեր, զինծառայողն արձակվում է իր ընտրած հիմքով, բացառությամբ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 10-11-րդ կետերով նախատեսված դեպքերի:
3. Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է զինված ուժերի պահեստազոր, եթե ենթակա չէ պաշտոնաթողության: Պայմանագրային զինծառայողը ենթակա է պաշտոնաթողության, եթե լրացել է սույն օրենքով սահմանված՝ պահեստազորում գտնվելու սահմանային տարիքը: Պաշտոնաթող նախկին զինծառայողները համարվում են զինված ուժերի և այլ զորքերի վետերաններ:
4. Զինվորական ծառայության մեջ 20 և ավելի տարի անբասիր ծառայած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանն առանձնակի ծառայություններ մատուցած պայմանագրային զինծառայողներին՝ անկախ ծառայության ընդհանուր ժամկետից, արձակելու իրավունք ունեցող պետի հրամանով կարող է վերապահվել զինվորական համազգեստ կրելու իրավունք, բացառությամբ սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-11-րդ կետերով սահմանված հիմքերով ծառայությունից արձակված անձանց: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն սպայական կազմի զինծառայողներին այդպիսի իրավունք վերապահում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Զինվորական համազգեստ կրելու իրավունք ունեն նաև ռազմամարզական կամ ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացին ներգրավված պահեստազորում հաշվառված և սպայական կազմի զինվորական կոչումներ ունեցող, ինչպես նաև պետական լիազոր մարմնում աշխատող և զինվորական ծառայության մեջ չգտնվող քաղաքացիները՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում, ինչպես նաև պայմանագրային զինվորական ծառայությունից անօրինական արձակված պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունում վերականգնվում է իր ցանկությամբ զինվորական ծառայությունից արձակելու վերաբերյալ հրամանը չեղյալ համարելու միջոցով՝ արձակման հրամանը տված հրամանատարի (պետի) հրամանով: Այդ դեպքում բաց թողնված զինվորական ծառայության ժամկետը հաշվարկվում է զինծառայողի զինվորական ծառայության ընդհանուր ստաժում:

6. Պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Արձակման հրամանում պարտադիր նշվում է զինծառայողի զինվորական ծառայության ընդհանուր ստաժը, որում առանձին նշվում են օրենքով սահմանված օրացուցային և արտոնյալ պայմաններով հաշվարկվող զինվորական ծառայության ժամանակահատվածները:

7. Զինվորական ծառայությունից արձակելու հրամանի հիման վրա զորամասի հրամանատարի (զինվորական կառավարման մարմնի պետի) հրամանով զինծառայողը հանվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի և բավարարման (ապահովման) ցուցակներից, և հրամանի տրման օրվա դրությամբ կատարվում է վերջնահաշվարկ: Հիվանդանոցային բուժման մեջ կամ հերթական արձակուրդում կամ հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողը զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանվում է բուժման կամ արձակուրդի ավարտի հաջորդ օրը:

8. Սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ կադրերի տրամադրության տակ թողնված և դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անհայտ բացակայող կամ մահացած ձևաչված պայմանագրային զինծառայողի զինվորական ծառայությունից արձակման հրամանում արձակման, իսկ զինծառայողի անունը զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օր է նշվում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը: Նշված դեպքում, ինչպես նաև հետախուզման մեջ գտնվող զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելիս վերջնահաշվարկ կատարվում է զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու օրվա դրությամբ:

9. Սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով նախատեսված դեպքում պայմանագրային զինծառայողի զինվորական ծառայությունից արձակման հրամանում արձակման, իսկ զինծառայողի անունը զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օր է նշվում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, և վերջնահաշվարկ կատարվում է այդ օրվա դրությամբ: Եթե մինչև դատապարտվելը զինծառայողը, սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, թողնվել է կադրերի տրամադրության տակ, ապա վերջնահաշվարկ կատարվում է զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու օրվա դրությամբ:

ՔԱԺՆ 5

ՊԱՀԵՍԱԶՈՐ

ԳՆՈՒՄ 12

ՊԱՀԵՍԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հոդված 56. Պահեստագրում հաշվառման կարգը

1. Պահեստագրում հաշվառումը զինվորական հաշվառման անբաժանելի մասն է, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստագրային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման գործընթացի, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը:

2. Պահեստագրում հաշվառվում են՝

- 1) ժամկետային պարտադիր կամ պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված քաղաքացիները.
- 2) սույն օրենքով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները.
- 3) սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում նշված քաղաքացիները.
- 4) բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած և սույն օրենքով սահմանված կարգով «վեյտեմանտ» զինվորական կոչում ստացած քաղաքացիները.
- 5) ռազմահաշվառական մասնագիտություն ունեցող իզական սեռի քաղաքացիները.
- 6) Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության և փրկարարական ծառայության համակարգերից արձակված քաղաքացիները՝ նրանց շնորհված հատուկ կոչումները (բացառությամբ զինվորական կոչումների) հաշվի առնելով.
- 7) 27 տարեկանը լրացած և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք.
- 8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և զինվորական կոչում ունեցող անձինք՝ ունեցած զինվորական կոչումները հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան.
- 9) սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց օրենքով սահմանված կարգով վճարներ կատարած քաղաքացիները.
- 10) օրենքով սահմանված կարգով զինվորական հաշվառման ենթակա և սույն մասում չնշված այլ կարգավիճակ ունեցող քաղաքացիները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերում քաղաքացիները պահեստագրում հաշվառվում են տարածքային զինվորական կոմիսարի որոշմամբ:

Հոդված 57.

Պահեստագործի խմբերը և պահեստագործում գտնվելու սահմանային տարիքը

1. Պահեստագործում քաղաքացիների հաշվառումն իրականացվում է ըստ զինվորական ծառայության կազմերի՝ տարիքային երկու խմբով:

2. Պահեստագործի առաջին խմբում հաշվառվում են՝

1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի պահեստագործայինները՝ մինչև 48 տարեկանը.

2) կրտսեր սպայական կազմի պահեստագործայինները՝ մինչև 50 տարեկանը.

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 55 տարեկանը.

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող պահեստագործայինները՝ մինչև 58 տարեկանը.

5) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-մայոր» և «գեներալ-լեյտենանտ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 65 տարեկանը.

6) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-գնդապետ» և «բանակի գեներալ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 70 տարեկանը:

3. Պահեստագործի երկրորդ խմբում հաշվառվում են՝

1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի պահեստագործայինները՝ մինչև 50 տարեկանը.

2) կրտսեր սպայական կազմի պահեստագործայինները՝ մինչև 52 տարեկանը.

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 58 տարեկանը.

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող պահեստագործայինները՝ մինչև 60 տարեկանը.

5) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-մայոր» և «գեներալ-լեյտենանտ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 68 տարեկանը.

6) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-գնդապետ» և «բանակի գեներալ» զինվորական կոչումներ ունեցող պահեստագործայինները՝ մինչև 70 տարեկանը:

4. Պահեստագործի առաջին և երկրորդ խմբերը բաժանվում են երկու կարգի՝ ըստ պահեստագործայինի զինվորական պատրաստության աստիճանի:

5. Առաջին կարգում հաշվառվում են՝

1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք սույն օրենքով սահմանված ժամկետներում անցել են պարտադիր զինվորական ծառայություն.

2) ավագ ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են հրամանատարական կազմի կրտսեր հրամանատարական խմբի պաշտոններ.

3) կրտսեր սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն,

բ. զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են հրամանատարական կազմի կրտսեր կամ միջին հրամանատարական խմբերի պաշտոններ.

4) ավագ սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են հրամանատարական կազմի ավագ կամ բարձրագույն հրամանատարական խմբերի պաշտոններ.

5) բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են հրամանատարական կազմի բարձրագույն հրամանատարական խմբի պաշտոններ.

6) մարտական գործողությունների մասնակցած քաղաքացիները՝ անկախ զինվորական ծառայություն անցնելու ժամկետից.

7) զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:

6. Երկրորդ կարգում հաշվառվում են՝

1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. չեն անցել պարտադիր զինվորական ծառայություն,

բ. զինվորական ծառայության մեջ են գտնվել վեց ամսից պակաս ժամկետով,

գ. զինվորական ծառայությունից արձակվել են առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով,

դ. ռազմահաշվառական մասնագիտություն ստացած և զինվորական ծառայություն չանցած իգական սեռի քաղաքացիները.

2) ավագ ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. պայմանագրային զինվորական ծառայության մեջ են գտնվել մեկ տարուց պակաս ժամկետով,

բ. պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվել են առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով.

3) կրտսեր սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. զինվորական ծառայության մեջ են գտնվել մեկ տարուց պակաս ժամկետով,

բ. զինվորական ծառայությունից արձակվել են առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով,

գ. զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են բացառապես ոչ հրամանատարական կազմի կրտսեր սպայական խմբի պաշտոններ.

4) ավագ սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. զինվորական ծառայությունից արձակվել են առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով,

բ. զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են բացառապես ոչ հրամանատարական կազմի ավագ սպայական խմբի պաշտոններ.

5) բարձրագույն սպայական կազմի զինվորական կոչում ունեցող այն քաղաքացիները, որոնք՝

ա. զինվորական ծառայությունից արձակվել են առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով,

բ. զինվորական ծառայության ընթացքում զբաղեցրել են բացառապես ոչ հրամանատարական կազմի բարձրագույն սպայական խմբի պաշտոններ:

7. Պահեստագործի առաջին խմբում հաշվառված պահեստագործայինի՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանային տարիքը լրանալու դեպքում պահեստագործայինը փոխանցվում է պահեստագործի երկրորդ խումբ:

ԳՆՈՒՄ 13

ՊԱՀԵՍՏԱԳՈՐԾԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հոդված 58. Պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումները

1. Պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները.
 - 1) վարժական հավաքներ՝ պահեստագործի առաջին խմբում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունները կատարելագործելու և նրանց վերապատրաստելու նպատակով.
 - 2) զինվորական վարժանքներ (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) կամ զորավարժություններ (զորախաղեր)՝ զինված ուժերի զորահավաքային պատրաստականության վիճակը ստուգելու նպատակով.
 - 3) պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավում:
2. Վարժական հավաքները հայտարարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ յուրաքանչյուր տարվա զորահավաքային նախապատրաստության պլանների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած միջոցառումների ցանկի, ժամկետների և ներգրավվող թվաքանակի ու մասնագիտությունների համաձայն:
3. Զինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) և զորավարժությունները (զորախաղերը) հայտարարվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ յուրաքանչյուր տարվա զինված ուժերի զորահավաքային պատրաստականության պլանների հիման վրա:
4. Պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավումն իրականացվում է պետական լիազոր մարմնի և քաղաքացու միջև երեք ամիս ժամկետով կնքվող պայմանագրի միջոցով: Սույն մասում նշված պայմանագիրը չի համարվում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր: Քաղաքացու կողմից հաստիքով նախատեսված պարտականությունների իրականացման կարգը և պայմանները սահմանվում են պայմանագրով: Պայմանագրի ձևը և պետական լիազոր մարմնի անունից պայմանագիրն ստորագրող իրավասու պաշտոնատար անձանց ցանկը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:
5. Պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին կամավոր հիմունքներով կարող են մասնակցել նաև սույն օրենքով սահմանված՝ պահեստագործում գտնվելու սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ հաշվառումից հանված անձինք՝ պայմանագրային հիմունքներով:
6. Սույն հոդվածով սահմանված՝ պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 59. Պահեստագործում հաշվառված քաղաքացիներին վարժական հավաքների կանչելու կարգը և ժամկետները

1. Պահեստագործային պատրաստության շրջանակներում իրականացվող վարժական հավաքներին կանչվում են պահեստագործի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված պահեստագործայինները:
2. Պահեստագործի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված՝
 - 1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պահեստագործայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև չորս անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում.
 - 2) ավագ ենթասպայական և սպայական (բացառությամբ բարձրագույն սպայական) կազմերի պահեստագործայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև երկու անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում: Սույն կետում նշված կազմերի՝ օդաչուական մասնագիտություն ունեցող պահեստագործայինները, թռիչքային վարժություններ կատարելու նպատակով լրացուցիչ կարող են կանչվել վարժական հավաքների մինչև չորս անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երկու ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամիս մեկ տարվա ընթացքում:
 3. Պահեստագործի առաջին խմբի երկրորդ կարգում հաշվառված՝
 - 1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պահեստագործայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև վեց անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս մեկ տարվա ընթացքում.
 - 2) ավագ ենթասպայական և սպայական (բացառությամբ բարձրագույն սպայական) կազմերի պահեստագործայինները վարժական հավաքների կարող են կանչվել մինչև երեք անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երկու ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամիս մեկ տարվա ընթացքում: Սույն կետում նշված կազմերի՝ օդաչուական մասնագիտություն ունեցող պահեստագործայինները, թռիչքային վարժություններ կատարելու նպատակով լրացուցիչ կարող են կանչվել վարժական հավաքների մինչև չորս անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև մեկ ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան մեկ ամիս մեկ տարվա ընթացքում:
 4. Անհրաժեշտության դեպքում, սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն, վարժական հավաքի մեջ ներգրավվելու ժամկետը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև երկու ամիս ժամկետով, ինչպես նաև ավելացվել վարժական հավաքների քանակը՝ չգերազանցելով վարժական հավաքներում գտնվելու՝ սույն հոդվածով սահմանված ընդհանուր ժամկետները:
 5. Պարտադիր զինվորական ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված և պահեստագործում հաշվառված պահեստագործայինները կարող են վարժական հավաքի կանչվել զինվորական ծառայությունից արձակվելուց

հետո՝ մեկ տարուց ոչ շուտ:

6. Քաղաքացին վարժական հավաքի կանչվում է իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման համաձայն: Ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած քաղաքացին անցնում է բուժփետագուտում, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման վայր:

7. Վարժական հավաքի ընթացքում քաղաքացին համարվում է զինծառայող, գրանցվում է վարժական հավաքի անցկացման վայրի գորամասի անձնակազմի ցուցակներում և վերցվում բոլոր տեսակի բավարարումների, նրան հաշվարկվում է նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափի, ամրակցվում են զենք, զինամթերք և անհատական պաշտպանության միջոցներ, նրա վրա տարածվում են զինծառայողների համար օրենքով սահմանված իրավունքները և պարտականությունները, սոցիալական երաշխիքները, վարժական հավաքի ժամանակահատվածը օրացուցային հաշվարկով ներառվում է քաղաքացու զինվորական ծառայության կամ աշխատանքային ընդհանուր ստաժում:

8. Վարժական հավաքի ավարտման օրը քաղաքացու տրվում է կարգազիր՝ յոթնօրյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատում հաշվառման կանգնելու համար:

9. Վարժական հավաքին մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը): Գործատուի կողմից (անկախ կազմակերպական-իրավական ձևից) սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

10. Քաղաքացու կողմից վարժական հավաքից խուսափելը կամ վարժական հավաքի ընթացքում գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հոդված 60.

Պահեստագործում հաշվառված քաղաքացիներին զինվորական վարժանքների (իրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումների) և զորավարժությունների (զորախաղերի) կանչելու կարգն ու ժամկետները

1. Պահեստագործի առաջին կամ երկրորդ խմբերում հաշվառված շարքային կամ ենթասպայական կամ սպայական կազմերի պահեստագործայինը կարող է կանչվել զինվորական վարժանքների (իրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումների) կամ զորավարժությունների (զորախաղերի) ոչ ավելի, քան տարեկան երկու անգամ:

2. Պահեստագործայինները զինվորական վարժանքների (իրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումների) կանչվում են մինչև 10 օրացուցային օր ժամկետով, իսկ զորավարժությունների (զորախաղերի)՝ դրանց տևողության ամբողջ ժամկետով:

3. Պահեստագործայինը զինվորական վարժանքի կամ զորավարժության կանչվում է իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման համաձայն: Ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած քաղաքացին ուղարկվում է զինվորական վարժանքի կամ զորավարժության անցկացման վայր՝ սահմանված ժամկետում զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցելու համար: Զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցելու ընթացքում քաղաքացին ապահովվում է անվճար սննդով և զինվորական համազգեստով՝ զինծառայողների համար սահմանված կարգով, և քնելատեղով:

4. Պահեստագործայինին զինվորական վարժանքի կամ զորավարժության ավարտից հետո միանվագ ձևով վճարվում են համապատասխան կազմերի պայմանագրային զինծառայողների համար սահմանված դրամական ապահովությանը համարժեք չափով և կարգով:

5. Զինվորական վարժանքին կամ զորավարժությանը մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում են քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը: Գործատուի կողմից (անկախ կազմակերպական-իրավական ձևից) սույն մասի պահանջների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

6. Քաղաքացու կողմից զինվորական վարժանքից կամ զորավարժությունից խուսափելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ԱՄԺՆ 6

ԶԻՆՇԱՄԱՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՊԱՀՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՎՈՒԹՅՈՒՆԸ

ՂՈՒԽ 14

ԶԻՆՇԱՄԱՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՊԱՀՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Հոդված 61.

Զինծառայողների դրամական ապահովությունը

1. Զինծառայողների դրամական ապահովությունը զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու միջոց է:

2. Զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

3. Չորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների ու սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանում է

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Չհինժառայողների դրամական ապահովությունը բաղկացած է զինվորական (այլ հատուկ) կոչումներին համապատասխանող զինվորական պաշտոնների դասակարգման խմբերին և զինվորական ծառայության ստաժներին համարժեք պաշտոնային դրույքաչափերից (այսուհետ՝ պաշտոնային դրույքաչափ), օրենքով սահմանված կարգով տրվող հավելումներից և լրավճարներից: Սույն հոդվածով զինժառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև գորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմի և զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինժառայողների վրա:

5. Չհինժառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի արտադրյալով: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Չհինվորական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնի խմբի սանդղակի գործակիցների միջոցով:

7. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է յոթ մակարդակից, որոնցից յուրաքանչյուրում սահմանվում է նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու՝ բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

8. Առաջին անգամ զինվորական պաշտոնում նշանակված անձի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակից միջոցով:

9. Նախորդ պաշտոնի նկատմամբ սահմանված կարգով ավելի բարձր կամ ցածր պաշտոնի նշանակված զինժառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է նոր պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակից միջոցով:

10. Չհինժառայողին զինվորական ծառայության ստաժի համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը:

11. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է հետևյալ սխեմայով.

1) 1-7-րդ մակարդակների համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի միավոր ավելացում՝ կախված զինվորական ծառայության ստաժից.

2) մինչև 2 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 1-ին մակարդակի գործակիցի միջոցով.

3) 2-ից մինչև 5 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 2-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

4) 5-ից մինչև 10 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 3-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

5) 10-ից մինչև 15 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 4-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

6) 15-ից մինչև 20 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 5-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

7) 20-ից մինչև 25 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 6-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

8) 25 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 7-րդ մակարդակի գործակիցի միջոցով.

9) սանդղակի 7-րդ մակարդակից պաշտոնային դրույքաչափը մնում է անփոփոխ:

12. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճի հերթական միավոր ավելացումն իրականացվում է սահմանված զինվորական ծառայության ստաժը լրանալուց հաջորդող ամսվա 1-ից:

13. Կազմակերպական-հաստիքային միջոցառումների կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ձանձաղելու կամ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից այլ գործեր տեղափոխվելու կամ ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություն ընդունվելու կամ վերադառնալու կապակցությամբ պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային մարմնի) տրամադրության տակ թողնված, ինչպես նաև արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինժառայողների պաշտոնային դրույքաչափը պահպանվում է օրենքով սահմանված կադրերի (կադրային մարմնի) տրամադրության տակ կամ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածի համար:

14. Ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններն ավարտած և սկզբնական սպայական զինվորական կոչում ստացած զինժառայողների համար՝ մինչև պաշտոնի նշանակումը, իսկ ռազմաբժշկական ուսումնական հաստատություններն ավարտած և ինտերնատուրայում կամ օրդինատուրայում սովորելու ընթացքում, պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սպայական կազմի նվազագույն խմբի 2-րդ մակարդակի գործակիցով:

15. Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ուսման (այդ թվում՝ որակավորման բարձրագույն նպատակով տարբեր դասընթացներ, կլինիկատուրա օրդինատուրա, դոկտորանտուրա, ասպիրանտուրա (ադյունկտուրա) կամ օտարերկրյա պետություններ ծառայության գործուղված և զինվորական պաշտոնից ազատված զինժառայողների համար ուսումնառության ընթացքում պահպանվում է զբաղեցրած վերջին պաշտոնի պաշտոնային դրույքաչափը:

16. Չհինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինժառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինժառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

17. Անհարգելի պատճառով ծառայության չներկայացած օրերի համար զինժառայողներին դրամական ապահովություն չի

հաշվարկվում:

18. Զինծառայողներին տրվող հավելումը դրամական ապահովության բաղկացուցիչ մաս է, որը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային արտապատկանության կամ բացարձակ դրամական մեծությամբ և տրվում է՝ ելնելով զինվորական ծառայության առանձնահատկություններից: Զինծառայողներին տրվող հավելումների դեպքերը, չափերն ու տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

19. Ծառայողական գործունեության գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) աշխատանքների որակյալ կատարման համար զինծառայողներին կարող են տրվել պարգևատրումներ՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 62. Զինծառայողների պարենային և իրային ապահովությունը

1. Զինծառայողները, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կարող են ստանալ պարենային և իրային ապահովություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Պարենային և իրային ապահովության կարգը ներառում է սննդով և իրային միջոցներով ապահովման ենթակա անձնակազմի շրջանակը, հատկացվող սննդի տեսականին ու դրանց օրական չափաբաժինները, ինչպես նաև իրային միջոցների ցանկը: Կառավարության սահմանած դեպքերում իրային ապահովությունը կարող է փոխարինվել դրամական փոխհատուցմամբ:

2. Զինծառայողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների սննդի ու իրային միջոցների հատկացման կարգը սահմանվում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հոդված 63. Զինծառայողներին տրվող դրամական օգնությունները

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կամ զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը կամ պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս զինծառայողներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով տրվում է դրամական օգնություն՝

- 1) 3 տարուց մինչև 10 տարի զինվորական ծառայության համար.
- 2) 10 տարուց մինչև 15 տարի զինվորական ծառայության համար.
- 3) 15 տարուց մինչև 20 տարի զինվորական ծառայության համար.
- 4) 20 տարուց մինչև 25 տարի զինվորական ծառայության համար.
- 5) 25 և ավելի տարի զինվորական ծառայության համար:

2. Մինչև երեք տարվա զինվորական ծառայության ստած ունեցող և առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կապակցությամբ պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմին օրենքով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելիս հաշվարկվում է դրամական օգնություն՝ վերջին զբաղեցրած զինվորական ծառայության պաշտոնի պաշտոնային դրույքաչափի չափով:

3. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ, ինչպես նաև առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ ընտանեկան պայմաններից ելնելով ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակվելիս շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր ժամկետային զինծառայողների համար հաշվարկվում է դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության անցած զինծառայողների պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի համաձայն դրամական օգնության իրավունք տվող պայմանագրային զինվորական ծառայության համապատասխան ստաժում:

4. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զինծառայողներին զինվորական ծառայության ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակվելիս հաշվարկվում է պատվով՝ Պատվով՝ Պատվով՝ չափը, տրման կարգը և պատվով՝ տնօրինման ուղղությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Նախկինում զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից հերթական անգամ արձակվելիս դրամական օգնությունը հաշվարկվում է արձակման օրվա դրությամբ դրամական օգնության իրավունք տվող զինվորական ծառայության լրիվ ստաժի (առանց պարտադիր զինվորական ծառայության ստաժի հաշվարկի) և զինվորական ծառայության լրիվ ստաժի մեջ առանձին ժամանակահատվածների համար սահմանված դրամական օգնության չափի տարբերության չափով: Ընդ որում, հերթական անգամ հաշվարկվող և նախկինում հաշվարկված դրամական օգնությունների հանրագումարը չի կարող գերազանցել ծառայության ընդհանուր ստաժի տվյալ խմբի համար սահմանված չափը: Դրամական օգնության իրավունք տվող հիմքով նախկինում զինվորական ծառայությունից արձակված, սակայն դրամական օգնություն չստացած և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին հերթական անգամ դրամական օգնության իրավունք տվող հիմքով զինվորական ծառայությունից արձակվելիս նախկին զինվորական ծառայության ժամանակահատվածի համար դրամական օգնությունը հաշվարկվում է նախկին արձակման օրվա դրությամբ ունեցած զինվորական ծառայության ստաժի համար տվյալ օրվա դրությամբ գործող օրենքով սահմանված չափերին և պայմաններին համապատասխան: Սույն հոդվածի 1-ին մասում չնշված և օրենքով սահմանված այլ հիմքով զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից արձակվելիս դրամական օգնություն հաշվարկվում է կրկին զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածին համապատասխան սահմանված չափով:

6. Զինվորական ծառայության ընթացքում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված ու դատապարտվելու կամ զինվորական կոչումից զրկվելու կապակցությամբ կամ կարգապահական տույժի կարգով

զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված նախկին զինծառայողն օգտվում է դրամական օգնություն ստանալու իրավունքից զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունեցած՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված զինվորական ծառայության ստաժի համար սահմանված չափով, եթե չի դիմել վերականգնվելու զինվորական ծառայության մեջ: Նշված դեպքում զինծառայողի զինվորական ծառայության ժամկետը՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից արձակվելը, համարվում է անընդմեջ:

7. Պայմանագրի ժամկետը լրացող և օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու ցանկություն հայտնաձևող շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողին իր ցանկությամբ տրվում է դրամական օգնություն՝ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան սահմանված չափով: Ընդ որում, սույն մասով սահմանված դրամական օգնությունը համապատասխան ստաժի շրջանակներում տրվում է մեկ անգամ, ինչպես նաև դրա հաշվարկման համար կիրառվում են սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնները:

8. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում զինծառայողին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների), ինչպես նաև նրա հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամին տարվա ընթացքում մեկ անգամ տրվում է նաև դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերով՝

1) նախկին և նոր ծառայության վայրերի հեռավորությունը 30-100 կիլոմետր լինելու դեպքում.

2) նախկին և նոր ծառայության վայրերի հեռավորությունը 100 կիլոմետրը գերազանցելու դեպքում: Ռազմաուսումնական հաստատություններն ավարտելուց հետո ծառայության նշանակված զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին սույն մասով նախատեսված դրամական օգնությունը հաշվարկվում և վճարվում է՝ հիմք ընդունելով նրանց մշտական բնակության և ծառայության վայրերի միջև եղած հեռավորությունը:

9. Զինծառայողներին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների) տարվա ընթացքում մեկ անգամ տրվում է նաև դրամական օգնություն՝ պաշտոնային դրույքաչափի չափով՝

1) զինծառայողի ամուսնության կամ

2) տարերային աղետի հետևանքով զինծառայողին սեփականության իրավունքով պատկանող գույքին վնաս պատճառվելու կամ

3) զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության կամ

4) զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքերում:

10. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

11. Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների դրամական օգնությանը վերաբերող դրույքները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների ու նրանց ընտանիքների անդամների վրա:

12. Սույն հոդվածի իմաստով՝ զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները և ծնողները:

13. Սույն հոդվածով սահմանված դրամական օգնությունների վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 64.

Զինծառայողների բժշկական օգնությունը և սպասարկումը

1. Զինծառայողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ՝ համապատասխան գերատեսչական ռազմաբժշկական հաստատություններում:

2. Այլ բժշկական հաստատություններում զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները բժշկական օգնություն և սպասարկում ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին երկարաժամկետ վերականգնողական ծրագրերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելիս կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելիս վնասվածք կամ խեղում կամ դրանց հետևանքով հիվանդություն ստացած զինծառայողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օտարերկրյա պետությունում բուժում ստանալու (հետազոտություն անցնելու) իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում նրանց բուժման (հետազոտության) անհնարինության դեպքում: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից օտարերկրյա պետությունում զինծառայողի բուժման (հետազոտության), կեցության և ճանապարհածախսի գումարների հատկացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Այն դեպքերում, երբ զինծառայողի բուժումը (հետազոտությունը) օտարերկրյա պետությունում կազմակերպելու համար անհրաժեշտ է ուղեկցող անձի ներկայություն, հատուցվում են նաև ուղեկցող անձի ճանապարհածախսը և կեցությունն օտարերկրյա պետությունում: Սույն մասով սահմանված իրավունքից չի օգտվում այն զինծառայողը, որի վնասվածքը կամ խեղումը կամ դրանց հետևանքով ստացած հիվանդությունը նրա կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է:

4. Բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողներին տրվում է անվճար առողջարանային բուժման իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով:

5. Երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են սույն հոդվածով սահմանված կարգով:

6. Սույն հոդվածի իմաստով՝ զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում՝

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

2) անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

3) ծնողները.

4) զինծառայողի, նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

Հոդված 65.

Զինծառայողների բնակարանային ապահովությունը

1. Պայմանագրային զինծառայողները ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են ծառայողական բնակարաններով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով: Ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Պայմանագրային զինծառայողին ծառայողական բնակելի տարածությամբ ապահովելիս կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում վճարելիս հաշվի են առնվում նաև նրա ընտանիքի հետևյալ անդամները.

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

2) համատեղ բնակվող՝ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով սպայական կազմի պայմանագրային զինծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից:

3. Առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները, որոնք համապատասխանաբար կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու կամ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, որը, սակայն, 4-րդ աստիճանի վթարային է և քանդման ենթակա, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, սակայն նախկին զինծառայողի և սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասով բնակելի տարածության բնակելի մակերեսը կազմում է 5.5 քառակուսի մետրից պակաս՝ հաշվառվում են որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, և նրանց սեփականության իրավունքով անհատույց հատկացվում է բնակարան, կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Սույն մասով սահմանված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող չեն համարվում այն անձինք, որոնք զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվանից առաջ՝ հինգ տարվա ընթացքում, օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունների օգտագործման նպատակային նշանակությունը կամ զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ բնակվում են օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չստացած բնակելի տարածությունում կամ օրենքով սահմանված կարգով ժառանգության բացումից հետո բնակելի տարածության նկատմամբ ունեն ժառանգական իրավունք, սակայն չեն հրաժարվել իրենց հասանելիք բնակելի տարածության նկատմամբ ժառանգության իրավունքից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց սեփականության իրավունքով անհատույց բնակարան հատկացնելիս կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելիս հաշվի են առնվում նաև նրանց ընտանիքի՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված պայմանները բավարարող հետևյալ անդամները.

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

2) անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

3) հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի հետ նույն հասցեում հաշվառված ծնողները, իսկ զոհված (մահացած) զինծառայողի ծնողները՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ վերջինիս հետ համատեղ հաշվառված լինելու հանգամանքից.

4) զինծառայողի, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

5. Սույն հոդվածով սահմանված զինծառայողների բնակարանային ապահովությունն իրականացվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան պետական լիազոր մարմնին հատկացված միջոցների հաշվին:

Հոդված 66. Զինծառայողների տրանսպորտային ապահովումը

1. Զինծառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից:
2. Զինծառայողների` Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու տրանսպորտային ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Սույն մասի համաձայն` փոխհատուցվում են նաև զինծառայողի ամուսնու (կնոջ) և 18 տարին չլրացած երեխաների` զինծառայողի հետ արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու տրանսպորտային ծախսերը:

Հոդված 67. Զինծառայողների` կրթություն ստանալու երաշխիքները

1. Պետությունը երաշխավորում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակների ընդունելությունը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված ուսումնական հաստատություններ` ընդհանուր մրցույթից դուրս, առանձին մրցույթով, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 68. Զինծառայողներին տրվող դրամական աջակցությունը

1. Զինծառայողի` ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհվելու (մահանալու) դեպքում նրա ընտանիքին տրվում է դրամական աջակցություն` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դրամական աջակցություն ստանալու իրավունքը տարածվում է նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների վրա` աշխատունակության կորստի չափին համամասնորեն, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ` զոհվելու (մահանալու) համապատասխան դեպքի համար նախատեսված աջակցության չափի նկատմամբ:
3. Սույն հոդվածով սահմանված աջակցություն ստանալու իրավունքից չի օգտվում այն զինծառայողը, որի զոհվելը (մահանալը) կամ աշխատունակության կորուստը նրա կողմից կատարված կանխատեսված օրինազանցության հետևանք է:
4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի վրա:

Հոդված 69. Զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության հետ կապված ծախսերի հատուցումը

1. Զինվորական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը հատուցվում են պետական բյուջեի հաշվին` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:
2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների (ինչպես նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և հետագայում մահացած զինծառայողների, որոնց մահվան պատճառը զինվորական ծառայության ընթացքում ստացած հիվանդությունն է, վնասվածքը կամ խեղումը) մահվան դեպքում գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը հատուցվում են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և չափերով:

Հոդված 70. Զինծառայողների կենսաթոշակային ապահովությունը, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամյա պարգևավճարի իրավունքը

1. Զինծառայողների կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:
2. Ամենամյա պարգևավճարի իրավունք ունեն`
1) զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող`
ա. Հայրենական մեծ պատերազմում կամ այլ պետություններում մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,
բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները,
գ. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները կամ այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները,
դ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակիցները,
ե. Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները,
զ. «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված զինծառայողները,

է. Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները,

ը. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները.

2) մահացած զինծառայողների ընտանիքների այն անդամները, որոնք ստանում են տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ և ունեն նաև կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք.

3) զոհված զինծառայողների ընտանիքների այն անդամները, որոնք ստանում են տարիքային աշխատանքային կենսաթոշակ կամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ՝ անկախ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքից.

4) Հայրենական մեծ պատերազմում, այլ պետություններում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամները՝ անկախ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու հանգամանքից:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերով միաժամանակ ամենամսյա պարգևավճարի իրավունք ունեցող անձին նշանակվում է ամենամսյա մեկ պարգևավճար՝ իր ընտրությամբ:

4. Ամենամսյա պարգևավճարի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական կամ պաշտոնետական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամները:

5. Զոհված՝ «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում ստացած և «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված, ինչպես նաև 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված և 2-րդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի անդամներին նշանակվում է մեկ պարգևավճար՝ իրենց ընտրությամբ: Ընտանիքի՝ ամենամսյա պարգևավճարի իրավունք ունեցող անդամի պահանջով նրա բաժնեմասը վճարվում է առանձին՝ համամասնորեն:

6. Սույն հոդվածի իմաստով՝ զոհվածի ընտանիքի անդամ են համարվում զոհվածի՝

1) ծնողները, ամուսինը.

2) 18 տարին չլրացած երեխան (ուսումնական հաստատությունում առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորելու դեպքում՝ մինչև ուսումնական հաստատությունն ավարտելը, բայց մինչև իր 23 տարին լրանալը).

3) 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակը, եթե նա հաշմանդամ է ձանաչվել մինչև իր 18 տարին լրանալը և ունի աշխատանքային գործունեությանը զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

7. Ամենամսյա պարգևավճարի չափերը, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարգևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված պարգևավճարի իրավունք:

Հոդված 71. Զինծառայողների լրացուցիչ երաշխիքները

1. Սույն օրենքի 64-66-րդ հոդվածների համաձայն՝ զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց մատուցված ծառայությունները կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները եկամտային հարկով հարկման նպատակով ընդունվում են որպես նվազեցվող եկամուտներ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով:

2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, ինչպես նաև զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներն օգտվում են ջրահեռացման և աղբահանության վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու իրավունքից:

3. Զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները հանդիսանում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվող սոցիալական փաթեթի շահառուներ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով զինված ուժերից արձակված նախկին զինծառայողները պետության կողմից ֆինանսավորվող մասնագիտական վերապատրաստման ծրագրերում ընդգրկվում են առաջնահերթության կարգով:

5. Սույն օրենքի համաձայն՝ պետական լիազոր մարմինների՝ սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանումները պարտավոր են զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) ու նրանց ընտանիքների անդամների պահանջով նրանց ապահովել սույն օրենքով սահմանվող սոցիալական ապահովության իրավունքներից և երաշխիքներից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերով:

Հոդված 72. Զինծառայողները և զինծառայողներին հավասարեցված անձինք

1. Սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ զինծառայողներ են համարվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք:

2. Զինծառայողներին հավասարեցված անձինք են՝

1) մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարժական հավաքների կանչված զինապարտները, ինչպես նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին

մասի, 68-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի և 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասի, 65-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների և 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթները, և հարկադիր կատարողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

4) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ քաղաքացիական հատուկ ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի, 65-րդ հոդվածի 1-ին մասի, 67-69-րդ հոդվածների, 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթները, ինչպես նաև պաշտպանության հանրապետական գործադիր մարմնում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ, 67-69-րդ հոդվածների դրույթները.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Սույն օրենքի այն դրույթները, որոնք վերաբերում են զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, տարածվում են նաև՝

1) ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո մահացած այն զինծառայողների ընտանիքների վրա, որոնց մահվան պատճառը ծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղուճ կամ առաջացած հիվանդությունը.

2) ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց ընտանիքների վրա:

ԱՄԻՆ 7

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՎՈՒՄ 15

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 73. Անցումային և եզրակալիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 17-րդ հոդվածի 2-4-րդ մասերը, 19-րդ հոդվածի 4-6-րդ մասերը, 25-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տրված տարկետումները (ծեռք բերած տարկետման իրավունքը) պահպանում են իրենց ուժը:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ասպիրանտուրայում կամ դատական դպրոցում ուսումը շարունակելու համար տարկետում ստացած անձանց վրա տարածվում են «Զինասպարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի, 14-րդ հոդվածի 4-րդ մասի և 15-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության դրույթները, որոնք գործում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և ուժը կորցրած են ճանաչվում 2021 թվականի հունվարի 1-ից:

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուսումնառության ընթացքում ռազմական պատրաստություն անցած և օրդինատուրայում ուսումը շարունակելու համար տարկետում ստացած անձանց վրա տարածվում են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-380-Ն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները, որոնք գործում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ և ուժը կորցրած են ճանաչվում 2021 թվականի հունվարի 1-ից:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն սույն օրենքի 65-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ սեփականության իրավունքով անհատույց բնակարան չստացած զինծառայողների համար պահպանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան ստանալու իրավունքը: Սույն մասում նշված զինծառայողները կարող են սույն օրենքի 65-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից հետո հրաժարվել սույն մասով սահմանված իրավունքից և օգտվել սույն օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակային ծրագրերից:

7. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում սեփականության իրավունքով անհատույց բնակարան չստացած և առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների համար պահպանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին

սեփականության իրավունքով անհատույց բնակարան ստանալու իրավունքը:

8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 օրենքը, բացառությամբ 1-ին և 2-րդ գլուխների, 7-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 6-րդ մասերի, 12-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի, 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և 3-րդ մասի, 17-րդ և 18-րդ հոդվածների, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքը, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-380-Ն օրենքը, բացառությամբ 12-րդ հոդվածի 2-րդ մասի, 14-րդ հոդվածի 9-րդ մասի, 15-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և 2.1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

9. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 օրենքի 1-ին և 2-րդ գլուխները, 7-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 1-ին (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձանց մասով), 3-րդ և 4-րդ մասերը, 15-րդ հոդվածի 3-րդ մասը, 17-րդ և 18-րդ հոդվածները, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-380-Ն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը, 14-րդ հոդվածի 9-րդ մասը, 15-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը և 2.1-ին մասը, 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

10. Սույն օրենքի ընդունումից բխող իրավական ակտերը ենթակա են ընդունման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2017 թ. նոյեմբերի 29
Երևան
ՀՕ-195-Ն